

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 70-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ



Ս.թ. հունվարի 9-ին լրացավ անվանի գիտնական,

բանասիրական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ Արևելագետների ընկերակցության (1985 թ.), Հայաստանի գրողների միության (1988թ.), ֆրանսիական Ասիական ընկերության (1989թ.), Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի (1991 թ.) անդամ, Լա Վեռնի (1990թ.), Սոֆիայի (1994թ.), Սորբոնի (1996թ.) և Ստրասբուրգի (1996թ.) համալսարանների պատվավոր դոկտոր, 30-ից ավելի գրքերի, շուրջ 80 գիտական հոդվածների և բազմալեզու

մամուլում սփռված հազարավոր քաղաքական հրապարակումների հեղինակ, Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահ Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանի ծննդյան 70-ամյակը: Նկատի ունենալով մեկ անձի մեջ գիտնականի ու պետության ղեկավարի գուգակցման հազվադեպ պատահող հանգամանքը՝ պատշաճ համարեցինք այդ հիշարժան տարեթիվը նշել ոչ թե ավանդական կարգով, այլ հոբելյարին վերաբերող արխիվային, հուշագրական և մատենագիտական որոշ նյութերի հրապարակմամբ, որոնք լավագույնս են բացահայտում գիտնականի և պետական գործչի նրա կերպարը:

Հատուկենտ բացառությունները չհաշված՝ արխիվային նյութերը հրատարակվում են առաջին անգամ: Հրապարակվող փաստաթղթերին կցվել են անհրաժեշտ մատենագիտական տեղեկություններ, իսկ որոշ դեպքերում նաև լրացուցիչ ծանոթագրություններ:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ,
ԱՎԵՏԻՍ ԱՎԱԳՅԱՆ

I

ԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԸ

«Բնավորությունը համառ է: Ուղեղը՝ զարգացած... Հոյակապ աշխատող է... Տաղանդավոր պետական գործիչ, գիտնական: Փայլուն խելքի և հոյակապ հիշողության տեր է...»
[Այծեղջյուրի նշանի տակ ծնվածների (դեկտեմբերի 22-ից հունվարի 19) հորոսկոպից]:

Իմ առաջին գիտական ծանոթությունը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ տեղի է ունեցել Լենինգրադում, որտեղ նա, անցնելով ասպիրանտուրան հայտնի աստրագետ Ն. Վ. Պիզուլևսկայայի ղեկավարության ներքո՝ պիտի դիտարկեր պաշտպաններ: Լենինգրադի համալսարանը հրավիրել էր ինձ ընդդիմախոսելու: Թեզը սրտիս մոտ էր, պաշտպանողը՝ 26-ամյա հաճելի երիտասարդ, որին ճանաչում էի դեռ հորիցս՝ Խորեն Սարգսյանից, որի՝ Գրականության ինստիտուտում ղեկավարած բաժնից էր գնացել Լևոնը Լենինգրադի ասպիրանտուրա: Նա դարձել էր հայագետ-աստրագետ, ես էլ հայագետ-աստրագետ էի: Մի տառի տարբերությունը նշանակում էր, որ Լևոնը զբաղվում էր Աստրիքի նյութերով (միջնադար), իսկ ես՝ Աստրեստանի սեպագրով (հին շրջան):

Լևոնը հաջողությամբ էր ընթանում իր բարդ, բանասիրական հանելուկներով լի բնագավառում: Մի քանի նրա գործերի բնորոշ վերնագրեր հանդես են բերում «Բանասիրություն» կոչվող գիտությունների փնջի նրան հատուկ ընդարձակ ընկալումը: Այսպես, լեզվի մասնավոր խնդիրներից («Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների»), աղբյուրագիտությունից («Գրիգոր Լուսավորչի վարդապետության ասորական աղբյուրները») և թարգմանություններից («Անանուն Եդեսացու Ժամանակագրությունը») մինչև միջնադարյան գրական գործընթացի պարբերացում («Հայ հին թարգմանական գրականություն»), որն արդեն համարյա պատմագիտական խնդիր է, և մինչև բուն պատմություն («Աստրիքի դերը հայկական Կիլիկիո մշակութային կյանքում»): Այսպիսի ընդարձակ ընդգրկում ունեն Տեր-Պետրոսյանի 70-ից ավելի հրատարակված աշխատությունները:

Մասնագիտությունների նմանության ու տարբերության հանգամանքով ունեցել ենք փոխադարձ գիտական կոնսուլտացիաներ, ըստ

որում նրա տված տեղեկությունները միշտ ճշգրիտ ու սպառիչ էին՝ աղբյուրի հղումով և մասնագիտական անհրաժեշտ պարզաբանմամբ:

Ամեն ինչ ընթանում էր իր կարգով, 1987-ին Տեր-Պետրոսյանը նույն Լենինգրադում պաշտպանեց դոկտորականը: Նրա ճանապարհը տանում էր դեպի ակադեմիական կոչումներ...

Հինգ տարի է ինչ Լևոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի Հանրապետության նախագահ է, առաջին նախագահը, և թվում է, թե ամբողջ կյանքում նախապատրաստվել է այս գործին: Գաղտնիքն, անշուշտ, նրա հոգեկան կերտվածքի, բնավորության մեջ է: Կարող եմ ասել, որ դրանց երկու կողմը գրեթե անակնկալ էին՝ չէի դիտել մեր շփումների ժամանակ: Երևի թաքնված էին՝ գիտնականի համար առաջնահերթ նշանակություն չունենալու պատճառով: Դրանցից մեկը հաստատականությունն է, մյուսը՝ վճռականությունը, դժվարին, ճգնաժամային պահերին, արագ, կտրուկ և ոչ ստանդարտ քայլեր անելու ունակությունը:

Մակայն բնավորությունից զատ, գաղտնիքը նաև այլ, նույնքան էական, բացատրություն ունի: Խնդիրն այն է, որ Տեր-Պետրոսյանը որոշ իմաստով, իսկապես, շարունակում է նախորդած շրջանի իր զբաղմունքը՝ գիտական աշխատանքը: Նա դեկավարում է երկիրը, էլնելով, կամա թե ակամա, կամ երկուսն էլ միասին, գիտնականի իր պատրաստությունից:

Իսկ ո՞րն է այդ՝ գիտնականի պատրաստություն կոչվածը: Գիտնականն առանձնանում է որոշակի հատկությունների ուրույն զուգակցմամբ, հատկություններ, որոնք, այլ կազմով, կարող են լինել և ուրիշ բնագավառի մարդկանց մոտ: Դրանցից է դիտողականությունը, առկա փաստերի հորձանքի մեջ ճիշտ կողմնորոշվելու, նրանց զարգացումն ու առանձնահատկությունը տեսնելու և հարցերին նրանց պատասխանելու կարողության չափը ստույգ պատկերացնելու ունակությունը: Դրանցից է գիտական, այսինքն անաչառ, ոչ միտումնավոր տրամաբանությունը, առկա տվյալները վերլուծելու կարողությունը՝ գիտական աշխատանքի հաջողության առաջին նախապայմանը: Ի վերջո, փաստարկման, սինթեզելու, եզրակացնելու ունակությունը, որը պսակում է գիտնականի աշխատանքը:

Ահա, գիտական բարձրագույն աստիճանին՝ դոկտորությանը հասնելու իր ճանապարհին, Տեր-Պետրոսյանը հասցրել է կուտակել այդպիսի հատկությունների բավականաչափ պաշար, որը և դրսևորվում է նրա նախագահական գործունեության մեջ, հաղորդելով վերջինիս համաչափ ընթացք, հետևողականություն, ապագայի կանխատեսում:

Բացի գործունեությունից այն դրսևորվում է նաև Տեր-Պետրոսյանի տարբեր առիթներով ունեցած ելույթների ու արտասանած ճառերի մեջ, որոնցից յուրաքանչյուրը գիտական աշխատության շատ տարրեր

է պարունակում: Դրսում դրանք միշտ հստակ ու ամփոփ են, և տալիս են պատմական պահի ցայտուն գնահատականը: Հիշենք նրա ելույթը Մոսկվայում՝ ա/թ. մարտի 15-ին Ռուսաստանյան դումայի ընդունած որոշման առիթով: Այդ ելույթը Մոսկվայի հեռուստատեսությունը մի քանի օր շարունակ ճաշակում էր: Ներսում նրա ելույթները ծրագրային են, համապարփակ և ավարտուն, տալիս են երկրի իրավիճակը, առանց մեղմացման և անիրականանալի խոստումների:

Եթե անդրադառնանք բուն իրավիճակին, երկրի զարգացմանը հինգ տարվա ընթացքում Տեր-Պետրոսյանի ղեկավարության ներքո, ապա այն օբյեկտիվ գնահատելու համար պետք է դիտարկել անպայման ԱՊՀ մյուս երկրների, մասնավորապես, մեր հարևանների առկա իրավիճակի հետ համեմատության մեջ: Այլապես գնահատականները քմածին ու վերացական կմնան: Հայաստանը մյուսների մեջ աչքի է ընկնում իր ներքին և արտաքին կայունությամբ, ներառելով նույնիսկ Ղարաբաղյան հիմնահարցը: Արտաքին տնտեսական, քաղաքական, մշակութային կապերը քայլ առ քայլ ամրապնդվում են: Ինչ վերաբերվում է կենսամակարդակի հիմնահարցին, ապա սա, իհարկե, կա և մնում է, բայց նրա սրությունը, թեև դանդաղորեն, նվազում է: Այստեղ ևս չենք կարող չդիմել համեմատությունների: Համեմատենք, նախ 1996-ը և 1992-ը՝ իր անասելի դժվարություններով՝ ցրտով, խավարով ու թերսնմամբ: Մյուս կողմից, դարձյալ անդրադառնանք շրջապատի երկրներին, որոնք, հակառակ իրենց ավելի նպաստավոր պայմաններին (բաց ճանապարհներ, բնական գործոններ), այսօր հազիվ թե ավելի բարգավաճ կյանք են վարում:

Առկա իրավիճակը ԽՍՀՄ-ից ծնունդ առած ԱՊՀ բոլոր երկրների համար պատմության անխուսափելի ընթացքի արգասիք է, խորհրդային տիպի սոցիալիզմից՝ մնացյալ աշխարհին հատուկ հասարակարգ ոտք դնելու ցավագին հատկանիշ՝ հատուկ անցման շրջանին, որից նրանք պետք է հետզհետե դուրս ելնեն աշխատանքի միջոցով:

Քաղաքական գործիչը միշտ էլ քննադատելի տեղեր ունի, բայց, արդյոք ճիշտ է նախընտրական շրջանում թեկնածուի ըստ արժանվույն գնահատմանը անպայման նաև քննադատություն ավելացնել: Գարծում եմ, որ այնքան էլ ճիշտ չէ, բայց այսուհանդերձ մի բան կցանկանայի նշել: Մեր հասարակությունը, մասնավորապես՝ մտավորականները, գիտնականները հանրապետության նախագահի հետ շփումների, հաղորդակցվելու, տեղեկանալու, արտահայտվելու պակաս ունեն: Սա ևս, անշուշտ, նախագահի բնավորության գծերից մեկի հետ պիտի կապված լինի: Ի դեպ, այն նշում է վերը, բնաբանում, մեջ բերված հորոսկոպը, որտեղ ասված է նաև, թե «Այծեղջյուրը ինքնապարփակ է»: Սակայն Ղարաբաղյան շարժման թեժ պահերին Լևոն Տեր-Պետրոսյանը հաջողությամբ հաղթահարում էր այդ գիծը, միտինգ-

ներում իր ունեցած բոցաշունչ ելույթներով: Բհարկե, դրանց ժամն անցավ, բայց շփման անհրաժեշտությունը տակավին կա և միշտ էլ կլինի...

Ի եզրափակումն կասեմ, որ թե՛ անցած հնգամյակի համայնապատկերը, և թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ մեր հանրապետության քաղաքական երկնակամարում գրաված տեղը լիովին հիմք են տալիս ընտրելու նրան Հայաստանի Հանրապետության նախագահ՝ հաջորդ հնգամյակի համար ևս:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի 1996 թ. գրած հոդվածը (տպագրության հանձնված «Բնօրրան» հանդեսին. օգոստոս, 1996 թ.) ժամանակին չի հրատարակվել Տեր-Պետրոսյանի խնդրանքով՝ ընտրությունների նախօրյակին հեղինակի բարեկամական վերաբերմունքը չչարաշահելու նկատառումով (ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 13/2):

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԺԱՆ-ՊԻԵՐ ՄԱՀԵ

ՆԱՄԱԿ ԿԱՌԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

Մեծարգո Կարլեն Դալլաքյան,

Թույլ տվե՛ք խորին վշտակցություն արտահայտել Ձեր սիրելի հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանդիպած անլուր և ահռելի փորձանքին համար: Այնքան զարհուրելի է այդ աղետը, որ խոսքս հատում է, կարեկցության բառեր որոնելիս, և տխուր լռություն պահելով, կարող եմ միայն ամեն ջանք թափել իմ ֆրանսիացի և ֆրանսահայ հայրենակիցների հետ միասին, որպեսզի դեպի Հայ ժողովրդին այստեղ եղած համերաշխության ուժեղ զգացումը ժամանակի ընթացքում չթուլանա և մերոնք շարունակեն, Ձեր կառավարության ցուցմունքներին համաձայն, պետք եղած միջազգային օգնություն հասցնել վերապրողներին, ավեր գյուղերի և քաղաքների բնակիչներին և ամբողջ ՀՍՄՀ-ին՝ առաջիկա վերակառուցման համար:

Բայց երկրաշարժի աղետալի հետևանքներից բացի, լուրջ մտահոգություն է պատճառում ինձ, որպես հայազետիս, հարզելի պաշտոնակցիս՝ բանասիրական գիտությունների դոկտորի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ներկա վիճակը: Հուզմունքով եմ իմացել, թե ձերբակալվելուց հետո, բանտարկվել է – եթե չսխալվեմ դեկտեմբերի 10-ից – երեսուն օրով, բայց հացադուլ է սկսել դեկտեմբերի 14-ից: Իմանալով թե ինչքա՛ն ծանր է եղել աղետից մի քանի օր առաջ թե՛ Հայաստանում և թե՛ Ադրբեջանում տիրող կացությունը, լավ եմ հասկանում, թե ՄՍՀՄ ստիպված է եղել լուրջ միջոցառումների դիմել, քաղաքացիների ապահո-

վությունը պաշտպանելու համար, ուստի և ինձ բոլորովին թույլատրված չեմ զգում, որևիցե կարծիք արտահայտել հարցի բուն առարկայի մասին:

Մակայն, աշխարհի բոլոր հայազետների նման, համարում եմ Մաշտոցյան Մատենադարանը Ձեր հանրապետության և Հայ ժողովրդի, Աբովյանի խոսքով, «թագն ու պարծանքը», և գիտեմ, թե ի՞նչ կարևոր դեր է կատարել այդ հիմնարկության մեջ որպես գիտական քարտուղար Լևոն Տեր-Պետրոսյանը, որը համեմատաբար երիտասարդ հասակին մեծ վաստակ ունի հայագիտության մեջ:

Ինքն արտասահմանում արդեն բավական համբավավոր է, ուստի և հրավիրվել է Ֆրանսիա երկու անգամ 1) Ecole Pratiques des Hautes Etudes-ի (Մորպոնի գիտահետազոտական մասնաճյուղի) հարյուրամյակի առթիվ և 2) անցյալ տարին Փարիզի համալսարանի ռեկտորի՝ Hոլմե Ahrweiler-ի կողմից: Հայերեն Եփրեմի իր պատրաստած բնագիրը հրատարակվել է Բելգիայում: Նորայր Սրբազանի հոբելենական ժողովածվում, Փարիզում, մեծ արձագանք ունեցող երկասիրություն է հրատարակել Աստվածաշնչի հայերեն թագմանության մասին: Վերջապես բոլորս մեծ հետաքրքրությամբ ենք սպասում հայ-ասորական գրական կապերին նվիրված իր դոկտորական աշխատանքի հրատարակվելուն:

Կարող է պատահել որ, երբ որ այս նամակը կստանաք, Լ. Տեր-Պետրոսյանը բանտից արդեն արձակված լինի: Մակայն եթե, որևէ պատճառով, դատարանը անհնարին համարեր իրեն արձակել, շատ եմ խնդրում, հանուն մարդասիրության միջամտել, Ձեր բարձր հեղինակությամբ, որպեսզի այս խոստմնալից գիտնականը ազատվի:

Այս լուր անձնական դիմումը գրում եմ սրտիս թելադրանքով: Ժամանակ չեմ ունեցել ուրիշ հայազետների հետ խորհրդակցելու այս հարցում (սակայն համոզված եմ, թե մեզնից ո՛չ ոք չի մխիթարվի, եթե մեր սիրելի պաշտոնակցին՝ Լ. Տեր-Պետրոսյանին, լուրջ դժբախտություն պատահեր): Ինձ թվում է, թե այդպիսի փորձանքի հանդիպելուց հետո, Հայաստանը իր բոլոր որդիների – դրանց թվում էլ նաև մտավորականների – կարիք ունի, այնպես որ կարելի է տեղի տալ որոշ ներդրամության:

Անցյալ աշնանը ստացել եմ Ձեր կողմից հրավերի հեռագիր, որին համար ջերմ շնորհակալություն եմ հայտնում: Պատասխանելս շատ եմ ձգձգել, որովհետև հույս ունեի, որ կկարողանայի ազատվել վրաս բարդված շատ ծանր պատասխանատվություններից և զբաղմունքներից: Բայց ինձ չի հաջողվել, ուստի և իմ կամքից անկախ ստիպված եմ Հայաստան գալս հետաձգել, թեպետև զգում եմ, թե հիմիկվա դժբախտ հանգամանքներում արտասահմանցի բարեկամների սատարությունն ու մխիթարությունը շատ կարևոր են Հայաստանին համար:

Հաճեցե՛ք ընդունել, մեծարգո Կարլեն Դալլաքյան, լավագույն ողջույններով, խորին մեծարանքիս հավաստիքը: Ձերդ՝ Ժան-Պիեր Մահե:

Ժ.-Պիեր Մահեի հայերենով շարադրված ձեռագիր նամակի պատճենը պահվում է ՀՀ Առաջին նախագահի արխիվում, թղթ. 13/1, 6. 01. 1989: Այդ ժամանակ նման նամակի հղումը՝ հասցեագրված Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին՝ Մփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Կառլեն Դալլաքյանին, նրա հեղինակից բավական խիզախություն էր պահանջում, քանի որ եթե իրերն այլ կերպ դասավորվեին և Խորհրդային Միությունը շարունակեր գոյատևել, ապա Ժան-Պիեր Մահեն, ամենայն հավանականությամբ, կդառնար անցանկալի անձ, գրկվելով Հայաստան այցելելու և Մատենադարանի նյութերից օգտվելու հնարավորությունից, ինչը իսկական ողբերգություն կլիներ նվիրյալ հայագետի համար:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՆԵՐՈՒՄ ՓԱՍՏԵՐԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ

«Գոլոս Արմենիի» թերթի՝ *ս. թ.* նոյեմբերի 11-ի համարում էս ծանոթացա Է. Շահիրյանի՝ «Համբարձումյանը հեռացավ վիրավորված» կարճ հոդվածի հետ, որում զետեղված էին Վիկտոր Համբարձումյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի լուսանկարները: Հոդվածագրի կարծիքով՝ Վիկտոր Համբարձումյանը դարձավ այն ժամանակվա նախագահ Տեր-Պետրոսյանի հետապնդումների գոհը և հեռացավ Ակադեմիայի նախագահի պաշտոնից «ամոթալի շահարկումների և մտացածին քննադատությունների արդյունքում»: Մտահոգված լինելով, որ այս փաստերի խեղաթյուրմամբ հրամցված ապատեղեկատվությունը կարող է նյութ դառնալ ապագա պատմաբանների համար, էս որոշեցի արձագանքել այդ հոդվածին այն սերնդի անունից, որը մասնակից է եղել այդ իրադարձություններին, և ընթերցողներին տրամադրել հավաստի տեղեկատվություն:

Մեծանուն գիտնական և երկար տարիներ Գիտությունների ակադեմիան զլխավորած Վիկտոր Համբարձումյանի համար 85 տարեկանում արդեն դժվար էր շարունակել իր բազմակողմանի գործունեությունը, և նա որոշում կայացրեց թողնել Ակադեմիայի նախագահի պաշտոնը: Այս կապակցությամբ նա դիմեց հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Վերջինս ցանկություն հայտնեց լսել գիտական հանրության կարծիքն ու վերաբերմունքը: Ակադեմիայում տեղի ունե-

ցած ընդհանուր ժողովում հարցը բարձրացվեց հենց Վիկտոր Համբարձումյանի կողմից: 1993 թ. Համբարձումյանը գնաց թոշակի՝ պահպանելով բոլոր իրավունքները: Տեր-Պետրոսյանի հավանությամբ և բացառապես միայն Վիկտոր Համբարձումյանի համար հիմնվեց Գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր նախագահի կոչումը:

Կուզենայի ներկայացնել մեկ փաստ ևս: Մի քանի տարի անց՝ 1996 թ., Ակադեմիայում պետք է տեղի ունենային ակադեմիայի նոր անդամների ընտրություններ: Այդ ժամանակ Համբարձումյանն ապրում էր Աշտարակում, դստեր՝ Կարինեի մոտ, և նա իր փեսա Հ. Շահբազյանի միջոցով խնդրեց իրեն փոխանցել Լևոն Տեր-Պետրոսյանի գիտական գործունեության մասին նյութեր, որպեսզի առաջադրի նրա թեկնածությունը ակադեմիայի անդամի ընտրություններում: Համաձայն Ակադեմիայի կանոնադրության՝ ակադեմիայի անդամի ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ է առաջարկվող թեկնածուի գրավոր համաձայնությունը: Հետևաբար, առանց Լևոն Տեր-Պետրոսյանի համաձայնության՝ հնարավոր չէր առաջադրել նրա թեկնածությունը: Ակադեմիայի այն ժամանակվա նախագահ Ֆադեյ Սարգսյանն ինձ հանձնարարեց զբաղվել այս հարցով, քանի որ ընտրությունների հետ կապված կազմակերպչական հարցերը գտնվում էին Ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղարի իրավասությունների ոլորտում, իսկ այդ պաշտոնը զբաղեցնում էի ես:

Կանոնադրության վերը նշված կետի մասին ես տեղեկացրի Վիկտոր Համբարձումյանին, ինչից հետո նրա միջնորդությամբ ինձ ընդունեց նախագահ Տեր-Պետրոսյանը: Ես տեղեկացրի հանրապետության նախագահին Վիկտոր Համբարձումյանի մտադրության մասին: Ուշադիր լսելով ինձ՝ Տեր-Պետրոսյանը տվեց երկու հարց. ի՞նչ կարծիք կա այս կապակցությամբ հայազետների շրջանում, և ի՞նչ կարծիք ունեմ անձամբ ես: Ես պատասխանեցի. «Հայազետները դրական են տրամադրված այս հարցում, իսկ ես հակված եմ նրան, որ դուք համաձայնություն տաք առաջադրմանը, բայց կարող եք հանել ձեր թեկնածությունը ընտրություններից առաջ»: Տեր-Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց անկեղծ պատասխանի համար և ավելացրեց, որ չկա ո՛չ առաջադրման, ո՛չ թեկնածությունը հանելու, ո՛չ էլ ընդհանրապես այս հարցը բարձրացնելու անհրաժեշտություն, քանի դեռ ինքը զբաղեցնում է հանրապետության նախագահի պաշտոնը: Նա նաև այս մասին տեղեկացրեց Վիկտոր Համբարձումյանին՝ նրան հայտնելով իր երախտագիտությունը:

Ավելորդ է նշել, որ եթե Վիկտոր Համբարձումյանը գեթ փոքր-ինչ դժգոհություն ունենար Տեր-Պետրոսյանի վերաբերմունքից, երբեք չէր երաշխավորի/առաջադրի նրա թեկնածությունը Ակադեմիայի անդամ դառնալու համար:

Հողվածի վերջում լրագրողը ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Վիկտոր Համբարձումյանի՝ Բյուրականում տեղի ունեցած ավելի քան համեստ հուղարկավորության արարողության վրա և այս հարցում նույնպես մեղադրում է հանրապետության նախագահին՝ չհիշատակելով, սակայն, որ Բյուրականում՝ ծնողների և կնոջ կողքին հողին հանձնվելու ցանկությունը հենց Վիկտոր Համբարձումյանինն էր:

Ընդհանրապես, ցանկացած երևույթ և իրադարձություն կարելի է մեկնաբանել տարբեր կերպ, ինչպես հաճախ դա լինում է: Սակայն իրականության և փաստերի աղճատված ներկայացումն աններելի է: Ցավում եմ, որ այդ հողվածի հեղինակը հանդիսանում է փորձառու և իրականում վաստակաշատ լրագրող է. Շահիրյանը:

«Голос Армении», 25. 11. 2014. Հայերեն թարգմանությունը՝ iLur.am., 5. 12. 2014. Ի հաստատումն Վ. Բարխուդարյանի հողվածում մատնանշված փաստերի, ավելորդ չենք համարում հրապարակել Վ. Համբարձումյանի նամակներից մեկը՝ հասցեագրված Լ. Տեր-Պետրոսյանին. «Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին. Առողջությանս վատ վիճակի պատճառով այսօր ես ուղարկեցի իմ հրաժարականը Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովին, ինդրելով ազատել ինձ ս. թ. մարտի 10-ից պրեզիդենտի պարտականություններից: Ակադեմիայում համարյա կես դար աշխատելու ընթացքում ես տեսել եմ համակրանք գործունեությանս և ներողամտություն սխալներիս նկատմամբ ժողովրդի կողմից: Նույնպիսի ներողամիտ վերաբերմունքի այս վերջին տարիների ընթացքում հանդիպեցի անձամբ Ձեր կողմից: Շնորհակալություն այս բոլորի համար: Հեռանում եմ խորապես համոզված, որ դժվարությունները կանցնեն և Հայաստանը կվերածվի ծաղկող գիտության երկրի: Վիկտոր Համբարձումյան»: (ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/2, 1. 03. 1993):

АКАДЕМИК ЮРИЙ БАРСЕГОВ

ПИСЬМО ЛЕВОНУ ТЕР-ПЕТРОСЯНУ

Дорогой Левон Акопович! Армянский Институт международного права и политологии в Москве предпринимает попытку сформулировать национальную идею армян. Это вызвано сознанием того, что в столь сложный и ответственный период своей истории армянский народ сможет справиться с вызовами времени только при условии тесного единения, объединения всех своих сил в Республике Армении, в НКР и

в диаспоре. Не отрицая, конечно, значение политических партий в жизни каждого государства, мы в то же время считаем, что должны научиться ставить общенациональные интересы выше партийных и личных устремлений. Это делает необходимым выработку общеармянской национальной идеи на основе ценностей, создававшихся веками. Иначе говоря, хотели бы вычлениить, вынести за скобки партийной жизни все, что принимается всеми. Мы полагаем, что к этой большой работе может приступить Институт, который свободен от партийной зависимости. Мы исходим из необходимости тщательного и должного учета всех имеющихся мнений, уважительного отношения к ним. Зная Вас как выдающегося интеллектуала и имея в виду Ваш большой политический опыт, мы просим Вас высказать Ваше мнение относительно целесообразности этого начинания. Мы были бы очень признательны, если бы подсказали нам где найти наиболее цельное и компактное изложение Вашего философского кредо по этой сложной проблеме. Мы были бы также признательны, если бы Вы посоветовали, к кому еще можно обратиться с подобной просьбой в Армении и за ее пределами. Пользуюсь случаем, чтобы выразить Вам мое глубокое уважение – Директор Института Ю. Барсегов».

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/5, 2001:

II

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱԶԳԵՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «Խոսք օրհնութեան. *Մեզ համար հոգեկան գոհունակություն է, սիրով ողջունել հրատարակումը սոյն հատորին, նուիրուած գիտնական եւ հասարակական գործիչ Լեւոն Տեր-Պետրոսեանի կեանքին ու գործին: Անձամբ ջերմ գնահատանքով ծանօթացել ենք նրան տարիներ առաջ, իբրեւ հմուտ գիտնականի Մատենադարանի եւ իբրեւ բարեխիղճ դասախօսի հայ միջնադարեան մատենագրութեան՝ մեր Հոգեւոր Ճեմարանի, որ նաեւ յոյժ օգտակար եղաւ Մայր Աթոռիս, իր գործակցութիւնը բերելով որպէս Սուրբ Գրքի թարգմանիչ, յատկապէս Սաղմոսաց Գրքի: Տիար Լեւոն Տեր-Պետրոսեանի գիտական եւ մանկավարժական գործունէութեան ընթացքին Մեզ տպաւորած են՝ նրա մտածումի յստակութիւնը, գիտական բազմակողմանի պաշարն ու վերլուծելու ճշգրտութիւնը, միշտ համոզիչ եւ տպաւորիչ: Այսպէս է որ նա, գուցէ անսպասելի կերպով, մուտք գործեց հայրենի հանրային քաղաքական կեանքից ներս ե-*

րեք-չորս տարիներ առաջ, մեր ազգային զարթոնքի փոթորկալի բախտորոշ օրերին ու հասաւ մեր ողջ ժողովրդի վստահութեան բարձունքին, ընտրուելով առաջին նախագահը մեր օրերի անկախ Հայաստանի: Մեր վերածնած Մայր երկրի ազգընտիր նախագահի մէջ Մենք տեսնում ենք նոյն գիտնականի մտածումի պայծառութիւնը եւ ժողովրդին ծառայելու նոյն ինքնավստահ եռանդն ու նուիրումը: Մեր մաղթանքն է որ երկնաւոր «Բարեաց Պարգեւատուն» միշտ մնայ նրան պահապան ու մարտակից, մինչեւ յաղթական իրականացումը մեր ազատատենչ ազգի արդար իղձերի: Հայրապետական օրհնութեամբ՝ Վազգէն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

ՀՀ Առաջին նախագահի արխիւ, թղթ. 13/1, 30. 04. 1992: Վեհափառի նկատի ունեցած հրապարակման նախաձեռնությունը, որի հեղինակներն էին Մատենադարանի գիտնական քարտուղար Արմեն Տեր-Ստեփանյանը եւ ֆրանսահայ հանրաճանաչ լրագրող Ժան Քեհիայանը, ինչ-ինչ պատճառներով չի իրականացել:

* * *

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «Պարոն Հրայր Հովնանյանին, Ամերիկայի Հայկական համագումար, Վաշինգտոն. Ես հրճված եմ՝ Ձեզանից տեղեկանալով, որ Ամերիկայի Հայկական համագումարը պատրաստվում է մեծարելու Հայաստանի Հանրապետության Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ Նյու-Յորք եւ Վաշինգտոն կատարելիք նրա այցելության ընթացքում: Մեծապէս գնահատում եմ Ձեր ազնիւ քայլը՝ պատվի արժանացնելու մի անձնավորության, որն իր կյանքը նվիրել է Հայաստանի նորանկախ պետության շինության, ապահովության, բարօրության ու զարգացման գործին: Ես քաջ գիտակցում եմ, թէ ինչպիսի դժվարին պարտականություն է դրված մեր Նախագահի վրա մեր պատմության մի այնպիսի վճռորոշ ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը բազում զրկանքներ ու զանազան անտանելի դժվարություններ է դիմագրավում: Սա մեր երկրի, մեր ազգի, մեր Եկեղեցու հանդէպ մեր սիրո քննության ժամն է: Հիրավի մի մարտահրավեր, որի դիմակայումը մեծագույն պատասխանատվություն է պարտքի զգացում է պահանջում: Մեր Նախագահին, ահա, քաջությամբ, ոգու տոկունությամբ եւ անսահման նվիրումով օժտված այդ մարդն է: Ես բարձր եմ գնահատում նաեւ այն սրտագին աջակցությունը, որն Ամերիկայի Հայկական համագումարն, այդքան մեծահոգաբար ու անմնացորդ կերպով, առաջին իսկ օրվանից ցուցաբերեց Հայաստանի նորանկախ պետության եւ նրա Նախագահի հանդէպ: Մեր հայրենիքը, նրա անկախ պետականությունը, նրա Նախագահը տարբեր համոզմունքների տեղ բոլոր հայերի նվիրական ջանքերով գոտեպնդվելու

կարիքն ունեն: Դարերի մեր երազանքը կյանքի է կոչվել: Եկե՛ք, այդ կյանքը դարձնենք մերը: Եկե՛ք, մեր կյանքերը՝ որպես անձինք կամ կազմակերպություններ, դարձնենք մեր ազգի կյանքը՝ որպես այդ ազգի որդիներ ու դուստրեր: Ես ջերմ շնորհակալություն եմ հայտնում նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը, որը Հայաստանի մեր անկախ պետության մեծագույն եւ մերձավոր բարեկամներից մեկն է: Մեր ամերիկացի եղբայրներն ու քույրերն, իրավամբ, արժանի են շնորհավորանքի եւ գովության՝ մեր երկրի դրության սրտացավ ընկալման եւ նրա ապահովության ու զարգացման գործում ներդրած շնայլ նպաստի համար: ԱՄՆ-ի համերաշխությունը Հայաստանի հանդեպ՝ պատմությունը կարճանագրի որպես նրա տարեգրության ոսկե էջերից մեկը: Այստեղ՝ Էջմիածնում, մեր Եկեղեցու Մայր աթոռում, մեր Սրբություն Սրբոցում, ես աղոթում եմ Աստծուն՝ զորացնելու մեր սիրելի Նախագահին եւ նրա բոլոր գործընկերներին ու օգնականներին: Թող Ամերիկայի Հայկական համագումարը գորանա ու բազմապատկի իր ծառայությունը մեր Հայաստան երկրին եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Հայրական սիրով, օրհնությամբ եւ աղոթքներով՝ Գարեգին Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Տպագրվել է Տեր-Պետրոսյանի մեծարման երեկոյի առթիվ Ամերիկայի Հայկական համագումարի հրապարակած ազդագիր-գրքույկում. «A Tribute to Honor Levon Ter-Petrossian, President of the Republic of Armenia», Washington, 1995.

* * *

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ. «Մեծայարգ Տիար Լևոն Տեր-Պետրոսյան, Երեւան. Սիրելի՛ պրն. Տեր-Պետրոսյան, Ուրախությամբ ու շնորհակալությամբ ստացայ Մաշտոցեան Մատենադարանի փոխտնօրէն պրն. Արշակ Բանուչեանի ձեռամբ Ձեր վերջին հատորը՝ «Խաչակիրները եւ հայերը»: Կ(ուզեմ իմ յատուկ գնահատանքս յայտնել այս աշխատասիրութեան համար: Բնչպէս գիտեք, Կիլիկեան շրջանը հայոց պատմութեան լուրջ ուսումնասիրութեան առարկայ չէ եղած Հայաստանի բանասէրներուն կողմէ: Վստահ եմ, որ այս ծիրէն ներս կարենոր նպաստ մը պիտի բերէ Ձեր այս գործը: Ինծի համար ծանօթ շրջան մըն է խաչակիրներու շրջանը, որովհետեւ համալսարանի մագիստրոսի իմ թէզս 1972-ին, անգլերէն լեզուով, եղած է Ներսէս Շնորհալիի յարաբերութիւնները Բիզանդիոնի կայսրին ու պատրիարքին հետ: Անգլերէնի թարգմանած եմ նաեւ յիշեալ յարաբերութեան առնչուած բոլոր թղթակցութիւնները: Հետեւաբար, Ձեր գրքին մէջ օգտագործուած գրեթէ բոլոր աղբիւրները ծանօթ են ինծի: Ահա թէ ինչու յատուկ հետաքրքրութեամբ թերթատեցի զայն: Այս շար-

քին շարունակումը կը նկատեն մեծապէս անհրաժեշտ: Հետեւաբար, ամբողջական յաջողութիւն կը մաղթեն Ձեզի այս յոյժ կարեւոր աշխատանքին մէջ: Նոր Տարուան եւ Աստուածայայտնութեան խորհուրդով լեցուն այս օրերուն Ձեզի եւ Ձեր ընտանիքին կը մաղթեն առողջութեամբ ու երջանկութեամբ լեցուն երկար տարիներ: Միրոյ ջերմ ողջունիւ, Աղօթարար՝ Արամ Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. թիւ 1/06, Անթիլիաս, 3 Յունուար, 2006»:

ՀՀ Առաջին նախագահի արխիւ, թղթ. 03/9, 3. 01. 2006:

III

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ՋՈՐՋ ԲՈՒՇ (Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ).
«Թանկագին պարոն նախագահ. Պատրաստվելով հեռանալ պաշտոնից, ցանկանում եմ Ձեզ շնորհակալություն հայտնել Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև սերտ կապերի հաստատման ուղղությամբ Ձեր թափած բազում ջանքերի համար: Ես վայելել եմ Հայաստանի անկախության առաջին տարվա ընթացքում Ձեզ հետ համագործակցելու հաճույքը և հավատացած եմ, որ միասին մենք կերտել ենք հայ-ամերիկյան ապագա հարաբերությունների ամուր հիմքերը: ...Հայաստանն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ամերիկացիների սրտերում: Ես վստահ եմ, որ Միացյալ Նահանգները շարունակելու են ապագայում ևս ուժգին աջակցություն ցույց տալ Հայաստանին, ինչպես մենք վարվել ենք անցյալում. անկեղծորեն՝ Ջ. Բուշ»:

Անգլերեն բնագիրը՝ ՀՀ Առաջին նախագահի արխիւ, թղթ. 03/2, 13. 01. 1993:

* * *

БОРИС ЕЛЬЦИН (Президент Российской Федерации): «Его превосходительству господину Л. А. Тер-Петросяну. Дорогой Левон Акопович, примите мои самые искренние и сердечные поздравления по случаю дня Вашего рождения. В России Вас знают как авторитетного государственного деятеля, внесшего большой личный вклад в упрочение союзнических отношений между Россией и Арменией. Уверен, что дальнейшее развитие тесных дружественных связей между нашими странами и народами будет важным вкладом в дело обеспечения мира и

стабильности в Кавказском регионе. Желаю Вам, дорогой Левон Акопович, доброго здоровья, личного счастья и благополучия. С уважением, Президент Российской Федерации Б. Ельцин».

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/5, 10. 01. 1998:

* * *

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ). «Թանկագին պարոն նախագահ. Ձեր պաշտոնաթողության կապակցությամբ ուզում եմ փոխանցել Ձեր նկատմամբ տածած իմ մեծ հարգանքը և իմ գնահատանքն արտահայտել Ձեր այն դերի, որը Դուք խաղացիք որպես Հայաստանի առաջին նախագահ: Դուք և ես սերտորեն համագործակցեցինք հայ-ամերիկյան հարաբերությունների ամրապնդման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բնագավառում: Մինչ նորանկախ Հայաստանը դիմագրավում էր անհամար մարտահրավերներ, Դուք առանցքային դերակատարում ունեցաք Հայաստանի՝ որպես անկախ, ինքնիշխան պետության կայացման գործում: Դուք հիշվելու եք Հայաստանի տնտեսության վերափոխման և բոլոր հայերի կյանքի բարելավման խնդրում ներդրած մնայուն ավանդի համար: Ես հատկապես գնահատում եմ Ձեր խիզախ առաջնորդությունը՝ վերջնական խաղաղության հաստատման ուղղությամբ կատարած աշխատանքի համար, որը կենսական կարևորություն ունի Հայաստանի և ողջ Կովկասյան տարածաշրջանի ապագայի համար: Հիշարին միանում է ինձ՝ Ձեր և Լյուդմիլայի հետագա ձգտումների իրականացման լավագույն մաղթանքներով. անկեղծորեն՝ Վիլյամ Ջ. Քլինթոն»:

Անգլերեն բնագիրը՝ ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/4, 17. 02. 1998:

* * *

ЕВГЕНИЙ ПРИМАКОВ (Министр иностранных дел Российской Федерации, академик): «Дорогой Левон Акопович, с глубоким волнением воспринял сообщение о Вашей отставке с поста Президента Республики Армения. Мы понимаем, что этот мужественный шаг крупного и ответственного государственного деятеля был продиктован заботой о единстве нации в сложное для Республики время. Но «партия мира» не проиграла «партии войны». Партию мира победить невозможно. Тепло и сердечно вспоминаю наши встречи и плодотворное сотрудничество. Высоко ценю Ваши замечательные качества человека и политика, ученого-энциклопедиста. Благодаря Вам армяно-российские отношения

получили новое развитие, приобрели характер союзнических. Армения и Россия вместе сумеют преодолеть все трудности и невзгоды. Уверен, дорогой Левон Акопович, что Вы еще скажете свое слово в жизни и в политике. И оно будет услышано всеми, кому дорог мир и безопасность, счастье людей. Берегите себя, здоровья и благополучия Вам на многие годы. Жму Вашу руку. С искренним уважением, Е. Примаков».

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/4, 3. 02. 1998: Հետազոտում հրատարակված իր հուշերում է. Պրիմակովը, անդրադարձալով Տեր-Պետրոսյանին, նրան բնութագրում է նաև «Президент Тер-Петросян – высокообразованный умный человек» խոսքերով (տե՛ս Е. Примаков. Годы в большой политике. М., 1999, с. 410):

* * *

АНАТОЛИЙ ЧУБАЙС (Первый заместитель председателя правительства Российской Федерации): «Уважаемый Левон Акопович, с тревогой и сожалением узнал о Вашей отставке с поста Президента Республики Армения. Эту горькую весть я обсуждал с Президентом Российской Федерации Борисом Николаевичем Ельциным и знаю, что он искренне переживает случившееся. Вы внесли уникальный, исторической важности вклад в становление государственности Армении, которая во многом благодаря Вашим, ее первого президента, личным усилиям стала свободной страной. Убежден, что за шесть лет Вашего президентства создана по сути новая Армения, необратимо приверженная демократическим преобразованиям. Только поэтому, испытывая естественное за ее дальнейшее после Вашей отставки развитие, все-таки надеюсь, что избранный Вами курс на мирное сосуществование и сотрудничество сохранится. Вместе с тем верю, что Вы, известный всему миру государственный деятель, не сказали своего последнего слова в политике. Ваши глубокие знания и богатый опыт, наверняка, найдут достойное применение в родной для Вас стране. Думаю, что независимо от занимаемых нами сегодня и в будущем должностей мы близкие с Вами по духу люди. Всегда помню о Вашей твердой поддержке в трудное для меня время и могу заверить, что и Вы можете на нее рассчитывать. Хотел бы считать себя Вашим другом. Желаю Вам крепкого здоровья и терпения. Буду рад встрече с Вами в Москве или в любом другом месте. С глубоким уважением и признательностью – Первый заместитель председателя правительства Российской Федерации А. Чубайс».

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/4, 3. 02. 1998:

* * *

ԶՈԶԵՖ ԼԻԲԵՐՄԱՆ (ԱՄՆ Սենատի անդամ). «Բանաձև Հայաստանի վերաբերյալ. Պարոն Նախագահ, պատմաբաններն իրավամբ կարող են արձանագրել, որ կոմունիզմի փլուզումը Խորհրդային բլոկի ներսում սկսվեց ոչ թե Ռուսաստանի սրտից կամ Կենտրոնական Եվրոպայից, այլ Հայաստանից: 1988 թվականի փետրվարին, հայ ժողովուրդը բողոքի խիզախ ալիք բարձրացրեց կոռուսպացված կոմունիստական վարչակարգի դեմ, որը նրան պարտադրվել էր Կրեմլի կողմից: Կոմունիստական տիրապետության դեմ այս ըմբոստությունը որպես մոդել և ոգեշնչման օրինակ ծառայեց նույն տարում ավելի ուշ Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցած ապստամբությունների համար:

Ոգեշնչելով Կենտրոնական Եվրոպայի ժողովուրդներին, հայերն իրենց հերթին քաջալերվեցին Բեռլինի պատի փլուզմամբ: 1990 թվականի օգոստոսին Հայաստանի՝ ժողովրդավարական հիմունքներով ընտրված խորհրդարանը ընդունեց երկրի անկախության հռչակագիրը, 1991-ի սեպտեմբերին հանրապետության ընտրողների ճնշող մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախությանը, իսկ հոկտեմբերի 16-ին քվեների 83 տոկոսով նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: ԵԱՀԽ դիտորդները ողջունեցին այդ ընտրությունները:

Նախագահ Տեր-Պետրոսյանն արժանի է ոչ միայն մեր հիացմունքին, այլև մեր օժանդակությանը: Խորհրդային իշխանությունների նկատմամբ նա հավասարակշիռ համագործակցության ուղի որդեգրեց: Նրա դեկլարության օրոք Հայաստանը միակ հանրապետությունն էր, որ հետևեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու նախագահ Գորբաչևի սահմանած լիակատար ընթացակարգին: Վերջերս Հայաստանը որոշել է անդամակցել նաև Խորհրդային տնտեսական նորաստեղծ միությանը: Բնչպես Տեր-Պետրոսյանը հայտարարեց Հայաստանի խորհրդարանում, Հայաստանը հետամուտ է լինելու «լիակատար քաղաքական անկախության»՝ զուգահեռաբար մասնակցելով նախկին ԽՍՀՄ տարածքում «ընթացող բոլոր կառուցողական գործընթացներին»: Նախագահ Տեր-Պետրոսյանը կառուցողական դեր է խաղացել նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ ընթացող բանակցություններում:

Միննույն ժամանակ նախագահ Տեր-Պետրոսյանը համոզված է, որ Խորհրդային Միությունն անհնար է վերականգնել: Քանի որ հանրապետություններից յուրաքանչյուրը, ինչպես Հայաստանը, ձգտում են լիակատար ինքնիշխանության, ոչ Խորհրդային կենտրոնական իշխանությունը, ոչ էլ միջազգային հանրությունը չպետք է խոչընդոտեն դրան:

Պարոն Նախագահ, հաշվի առնելով ժողովրդավարության և ինքնիշխանության նկատմամբ մեր հավատը, հայ ժողովրդի՝ անկախ լի-

նելու բացահայտ ցանկությունը, ինչպես նաև Նախագահ Տեր-Պետրոսյանի պատասխանատու քաղաքականությունը՝ ես, սենատորներ Փրեսլըրի և Սայմրնի հետ միասին, այսօր Սենատի կարծիքն արտահայտող մի բանաձև եմ ներկայացնում, որի համաձայն՝ ԱՄՆ կառավարությունը պետք է համապատասխան դիվանագիտական ճանաչում ապահովի Հայաստանի Հանրապետության համար և օժանդակի նրա՝ միջազգային կազմակերպություններին, այդ թվում ՄԱԿ-ին և ԵԱՀԽ-ին, անդամակցելու հայտերին:

Հայ ժողովուրդն արժանի է այդպիսի ճանաչման: Դեպի անկախություն նրա ընթացքը ցույց է տալիս, որ նա նույնքան նվիրված է ազատությանը, որքան նախկին ԽՍՀՄ մյուս ժողովուրդները: Այդ նվիրումն ու նպատակի գիտակցումը գոյություն են ունեցել դարեր ի վեր և կենդանի են մնացել՝ իր կամքից անկախ, ցարական, օսմանյան և կոմունիստական կայսրությունների կազմում հայտնված հայ ժողովրդի տառապանքների, այդ թվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կրած սարսափների ու ցեղասպանության, երկարուձիգ ժամանակաշրջաններում:

Այդ խիզախ ժողովրդին մենք պարտավոր ենք հայտնել մեր զորակցությունը, հիացմունքը և դիվանագիտական ճանաչումը:

Պարոն Նախագահ, խնդրում եմ, որ, ելույթիս կից, այս բանաձևի ամբողջական բնագիրը տեղ գտնի Արձանագրության մեջ, և պաշտոնակից ընկերներին կոչ եմ անում աջակցել դրան»:

Ջ. Լիբերմանի նախաձեռնած Հայաստանի վերաբերյալ բանաձևի նախագիծը ԱՄՆ Սենատում ընդունվել է 1991 թ. նոյեմբերի 12-ին: Ելույթի անգլերեն բնագրի պատճենը՝ ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 13/1:

IV

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՅԱՆ (ՀՀ Ազգային ժողովի նախագահ). «Բացարձակապես չիդեալականացնելով մեր Նախագահին, կասեի, որ նա ունի բոլոր այն մարդկային հատկանիշներն ու այն պատրաստվածությունը, որոնք անհրաժեշտ են երկրի ղեկավարին: Համենայնդեպս, մեր քաղաքական ասպարեզում չկա ուրիշ մեկը, որ կարողանա այս պայմաններում մրցել նրա հետ...

Նախագահը ունի գիտելիքների մեծ պաշար: Ամեն օր մենք զգում ենք դրա կարևորությունը: Ի սկզբանե ունենալով հարուստ գիտելիք-

ներ. Նախագահը այս տարիների ընթացքում բազմապատկել է դրանք՝ անընդհատ աշխատելով: Բացի այդ, Լևոն Տեր-Պետրոսյանը ամենատարբեր շրջանակներում կարողանում է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ հարաբերությունները դառնում են հնարավորին չափ շիտակ: Նկատի ունեմ հատկապես արտասահմանյան քաղաքական գործիչների հետ շփումները, որոնց ընթացքում նա կարողացել է ներկայացնել Հայաստանը ինչպես հարկն է»:

«Հայք», 19. 09. 1996:

* * *

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՀՀ փոխնախագահ, 1996-ից՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ). «Նման անհատականությունների ծնունդը, ինչպիսին է ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, թելադրված է թերևս պատմական անհրաժեշտությամբ: Ամեննին չբացարձակացնելով անհատի դերը պատմության մեջ, միևնույն է՝ պետք է փաստենք, որ մեր ժողովուրդը իր դժվարին տարեգրության շատ հանգրվաններում կարող էր խուսափել մեծ կորուստներից, եթե ժամանակը նրան պարզներ նման անհատականություններ: Լևոն Տեր-Պետրոսյան քաղաքական գործչին ամենից առաջ բնորոշ են մտավոր մեծ ներուժը, բարդագույն հասարակական երևույթները դեռևս սաղմնավորման փուլում խորությամբ ընկալելու, դրանց զարգացման միտումները բացառիկ նրբանկատությամբ զգալու, գործնական քաղաքականության մեջ իրավիճակային գրեթե անգերազանցելի վերլուծություն կատարելու և ճգնաժամային իրադրություններում համբերատար, հետևողական ու միակ հնարավոր քայլը գտնելու՝ ղեկավարի համար անչափ կարևոր հատկանիշները: Ես բազմիցս եմ նման որակների դրսևորման վկան եղել թե՛ այստեղ՝ Հայաստանում և թե՛ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների ու արտասահմանյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ: Մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ մի շարք խոշոր, միջազգային մակարդակի քաղաքական դեմքեր անթաքույց ձևով իմ ներկայությամբ իրենց հիացմունքը, ինչու չէ, նաև բարի նախանձն են արտահայտել մեր նախագահի՝ որպես մեր ժամանակի խոշոր քաղաքական գործիչներից մեկի, այդ որակների հանդեպ: Նման որակները առավել մեծ կարևորություն են ստանում հատկապես բարդ անցումային ու մեզ բնորոշ աշխարհաքաղաքական իրավիճակներում: Կան քաղաքական գործիչներ, որոնք կարող են առանձին վերցրած տարբեր որակներով շահեկանորեն աչքի ընկնել, սակայն բացառություններ են այն անհատականությունները, որոնց մեջ խտանում ու ներդաշնակվում են անցյալը, ներկան ու ապագան զգալու, երևույթների պատճառահետևանքային կապերը ճիշտ

զնահատելու, ոչ թե զգացմունքային զեղումներով, այլ իրականության գործոնային խոր ու համակողմանի վերլուծության հիման վրա վճիռներ կայացնելու և, վերջապես, սեփական «ես»-ը հաղթահարելու ու ազգի և ժողովրդի ճակատագրին զինվորագրվելու կարողությունը: Մեծ բարեբախտություն է, որ հենց այսպիսին է Հայաստանի Հանրապետության նախագահը: Որպես մարդ Լևոն Տեր-Պետրոսյանը դասական ազգային մտավորական է, որին լուրջ գիտնականի, խորաթափանց մտածողի որակներից զատ բնորոշ են նաև նուրբ հումորն ու, թող զարմանալի չթվա, նաև խոր հուզականությունը: Այս վերջինին թերևս քչերն են հաղորդակից եղել: Ես բազմիցս վկան եմ եղել այն վիճակների, երբ ամեն մի զինվորի գոհվելու կամ վիրավորվելու լուրը լսելով՝ նախագահը ինչպիսի մեծ անձնական ողբերգություն է ապրել: Նրա հավատամքն է հայ մարդուն տեսնել իր պատմական հիշողության իմաստավորված ու իրական տերը դարձած, լիարժեք ու ստեղծագործական կյանքով ապրող, ու նաև լավատես է, որ դա մոտ ապագայի խնդիր է... Ուրախալին այն է, որ հակասական ու նորանկախ պետության համար դժվարագույն այս պայմաններում Լևոն Տեր-Պետրոսյան մտավորական-քաղաքական գործիչը դարձավ նաև հմուտ ղեկավար՝ ոչ միայն վստահորեն իր ձեռքում պահելով հանրապետության արտաքին քաղաքականության ղեկը, այլև արդյունավետ ու հստակ իրականացնելով գործադիր իշխանության ղեկավարի դժվարին ողջ առաքելությունը: Բնձ համար, անկախ մեր ժամանակներին բնորոշ տարբեր բարդություններից, չափազանց հեշտ է աշխատել մի մարդու հետ, որը էությամբ ժողովրդավար է, երբեք կարծիք չի պարտադրում, համբերատար է ու ուշադիր դիմացինի նկատառումների ու կարծիքի հանդեպ, կարողանում է սկզբունքային քննարկում ու անկաշկանդ բանավեճ կազմակերպել, վճռական է ու հետևողական: Ես խորապես համոզված եմ, որ մեր պետական կառավարման համակարգի հստակեցմանը գուրնթաց այս որակները շատ ավելի մեծ վերջնական հատույց կապահովեն: Ես ակամայից հիշեցի արժանահիշատակ Վեհափառ Հայրապետի խոսքերը 1991 թ. նոյեմբերի 11-ին խորհրդարանում՝ նախագահի երդման արարողության ժամանակ. «...Մենք Ձեզ գոհաբերում ենք Հայրենիքի պատարագի սեղանի առաջ: Մենք տարակույս չունենք, որ Դուք ավելի ստուգությամբ, քան մենք, Ձեր հոգու աչքերով տեսնում և ապրում եք Գողգոթայի Ձեր ճանապարհը, պատրաստ դիմագրավելու ամեն վտանգ, ամեն տառապանք, սրբազան մի պարտականություն կատարելու ազնիվ տեսիլքով»:

«Հայաստանի Հանրապետություն», 9. 01. 1995:

* * *

ՀՐԱՆՏ ԲԱԳԴՍՅԱՆ (ՀՀ վարչապետ). «ՀՀ մեծարգո պարոն նախագահ, յուրաքանչյուր անհատի համար անասելի դժվար ճակատագիր է սեփական կենսագրությունը կապել իր ժողովրդի կենսագրության հետ. չէ՛ որ «պատմությունը, ի վերջո, մի քանի անհատների կենսագրությունն է» հին և երբե՛ք մերժված իմաստությունը ենթադրում է և՛ փոխադարձ նվիրագործում, և՛, միաժամանակ, տաժանակիր մի պատասխանատվություն, մանավանդ այնպիսի բարդ և հակասական ժամանակներում, որում այսօր ապրում ենք մենք բոլորս: Սկսած 1988 թվականից Դուք Ձեր կենսագրությունը, արդեն կյանքը, որը նվիրված էր հայրենական գիտությանը, կապեցիք Ձեր ժողովրդի իդձերի ու տվյալտանքների, անկախության ու ազատության, ինքնության այն պատմական վիճակին, որը 1991-ի սեպտեմբերի 21-ից, Հայաստանի Հանրապետություն բաղձալի և սրբազան անվամբ, այսօր իր զինանշանով ու դրոշմով իր հազարամյակներն է շարունակում: Այդ անհատների, մեր ժողովրդի ապրելու աստվածային կամքով վավերացված շարունակությունը, սխալված չենք լինի, եթե նաև սկիզբ համարենք. պատմության մեջ առաջին անգամ այդ անխախտ կամքը պետության, սեփական պետության մարմնավորվելու հնարավորություն է ստացել և ահա այստեղ է, որ դարձյալ ու դարձյալ գերկարևորվում է պետության գոյավորման կարգն ու պաթոսը տվող անհատականության դերը: Ահա այստեղ է, որ առաջնեկության՝ առաջին որդու, առաջին զինվորի, առաջին զոհի, առաջին հերոսի ծնունդը բոլորի համար դառնում է պատվիրան: Ահա այստեղ է, որ պատմությունը երբեք չի սխալվում, որովհետև այն գործում է ոչ թե տվյալ պահի խանդավառության կամ հուսալքության եթերային վիճակներով, այլ իր հազարամյա դիպուկ ու անսխալական միակ տրամաբանությամբ փնտրում և գտնում է իր ընտրյալին, որին էլ շնորհում է առաջնեկության տոհմական գավազանը: Վերջին յոթ-ութ տարիների ընթացքում այս տարածքաշրջանի անցյալ և ներկա քաղաքականության թոհուրոհի մեջ հայտնված մեր հանրապետության դժվարին, բայց կայուն, ապահով, հուսալի, քաղաքականապես ճշգրիտ ընթացքի վրա արդեն մեկընդմիջտ դաջված է Ձեր նախագահական վսեմ ու անխռով պահվածքը: Մեր հանրապետության ներքին՝ երբեմն անցյալից եկող, երբեմն պարզապես մեր բոլորի՝ պատմականորեն ոչպետական փորձից ծնված վայրիվերումների անմիջական կարգավորման մեջ Ձեր նախագահական՝ ոչինչ չգերազանահատող և ոչինչ չթերագնահատող սթափ անդադարձն է: Հայաստանը պատերազմական կոնֆլիկտի մեջ ներքաշելու բոլոր փորձերը վիժեցնելը Ձեր՝ քաղաքագետի ու մարտավարի եզակի կողմնորոշումն ու ձիրքն է: Այս ամենը, իրոք, դժվար ճակատագիր է: Բայց և՛ եզակի:

Պատվաբեր է: Այն Ձեր՝ Հայաստանի Հանրապետության նախագահի պատիվն է: Միաժամանակ պատիվը այն ժողովրդի, ով անսխալակա-
նորեն, իր երեքիսկարամյա բնագործի և փորձի ահռելի պաշարով ընտ-
րեց իր առաջին նախագահին: Ուրեմն թույլ տվեք, մեծարգո պարոն
նախագահ, իմ և Հայաստանի Հանրապետության կառավարության ա-
նունից Ձեր ծննդյան 50-ամյակի առթիվ Ձեզ ցանկանալ քաջառողջույթ-
յուն և նորանոր հաջողություններ Ձեր պատմական առաքելության
մեջ, անսահման երջանկություն մեր ողջ ժողովրդին: Տա Աստված, որ
Հայաստան կոչվող այս նվիրական նավը, որի ղեկին եք Դուք, մեր ժա-
մանակների խոշուրտությունների միջով ապահով հասցնեք բաղձալի նավա-
հանգիստ: ՀՀ վարչապետ, ՀՀ կառավարություն»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/8, 9. 01. 1995:

* * *

ՎԱԶԳԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ (ՀՀ պաշտպանության նախարար). «Հանրա-
պետության նախագահն է, որ կայացնում է ամենադժվարին, ամենա-
պատասխանատու որոշումները, և տեր է մեր բոլոր հաղթանակներին,
տեր է մեր բոլոր պարտություններին, գնացքից երբեք չի թռչելու, տա-
նելու է մեր գնացքը մինչև վերջ: Ես այսօր չեմ խոսելու մեր հաղթա-
նակների մասին, մեր բանակի մասին. մեր բանակը ես մեկ անգամ
տեսնել ցանկացողները վաղը կարող են ներկա լինել հայ-ռուսական
մեծ զինախաղերին, որոնք ամենախոշորն են Սովետական Միության
փլուզումից հետո և որին մասնակցում է շուրջ 4 հազար զինվոր: Մեր
բանակի մասին անգամ փոքր-ինչ կասկած ունեցողները կարող են
ներկա լինել. բոլորիդ սիրով հրավիրում եմ սեպտեմբերի 21-ին ժամը
11-ին այս հրապարակում տեղի ունենալիք անկախության հնգամյակի
շքերթին, և դա է հանրապետության նախագահի՝ բանակի գլխավոր
հրամանատարի ամենամեծ ձեռքբերումը ըստ իս, սակայն ես ուզում
եմ խոսել մեղալի հակառակ, չերևացող երեսի մասին: Ամենաառաջին,
ամենամեծ հաղթանակը, որ մենք ունեցանք, դա մեր հոգեբանության
փոփոխությունն էր, որը քաղաքական երիտասարդ գործիչների այս
թիվը, հատկապես Լևոն Տեր-Պետրոսյանը, կարողացավ կատարել:
Մենք լուրջ-սնապարծ, մեծախոս քաղաքականությունից կարողա-
ցանք դառնալ իրատես, քայլ առ քայլ մեր խնդիրները իրականացնող
ազգ: Մեր նախագահը երբեք հրապարակավ չխոսելով Հայ դատի մա-
սին, քայլ առ քայլ լուծում է Հայ դատի բոլոր խնդիրները: Եվ Լևոն Տեր-
Պետրոսյանի օրոք, այսօր և վաղը հայ ազգը երբեք այլևս կոտորած չի
տեսնի: Հայ դատի ամենամեծ ջատագույնները կորցրեցին հայրենիքի
կեսը, հետո երգեցին թե. «Մասիսին բան պատահի՝ ազգովի դառնանք
Ֆիդայի» (թե Մասիսին է՛լ ինչ էր պատահելու՝ չեմ հասկանում, ինչ որ

պատահելու էր՝ պատահել էր): Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք այլևս նման երգեր չեն երգվի, Լևոն Տեր-Պետրոսյանի հետ միասին մենք քայլ առ քայլ մեր ռազմական հաջողությունները կհասցնենք վերջնական հաղթանակների»:

«Հայաստանի Հանրապետություն», 19. 09. 1996:

* * *

ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ (ԼՂՀ նախագահ). «Արցախի երախտագետ ժողովուրդը երբեք չի մոռանա Ձեր անձնական ներդրումը մեր հերոսական գոյապայքարում: Մենք մեր թիկունքում միշտ զգացել ենք մայր Հայաստանի, Հայաստանի Հանրապետության գորակցությունը»:

«Այսօր ԼՂՀ-ն կայացած հանրապետություն է, որն ունի ինքնուրույն տնտեսություն, մարտունակ բանակ, ներքին կայուն իրավիճակ և հարգանք միջազգային հանրության կողմից: Մեզ համար պարզ է, որ այս ամենը դժվար թե լիներ, եթե մեր թիկունքում չլիներ Հայաստանի Հանրապետությունը... Ես կուզեի շեշտել Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ներդրումը մեր բոլոր հաջողություններում: Առանց նրա հստակ դիրքորոշման, առանց փոխհամաձայնեցված քաղաքական քայլերի, մենք դժվար թե կարողանայինք ունենալ այն, ինչ ունենք: Դա Ղարաբաղում հասկանում են բոլորը, և ինձ թվում է, որ Հայաստանում և Սփյուռքում՝ նույնպես»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 09. 01. 1995, «Հայաստանի Հանրապետություն», 19. 09. 1996, վերահրատարակված՝ Լ. Տեր-Պետրոսյան. Վերադարձ, էջ 79:

* * *

ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ (ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ). «Անժխտելի է այն փաստը, որ մեր հաջողությունները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության վարած ճկուն դիվանագիտությամբ և հավասարակշռված քաղաքականությամբ: Եվ ինչ խոսք, որ այդ դժվարին գործում մեծ է նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի դերը»:

«Հայաստանի Հանրապետություն», 19. 09. 1996, վերահրատարակված՝ Լ. Տեր-Պետրոսյան. Վերադարձ, էջ 79:

* * *

ԼԵՈՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ԼՂՀ վարչապետ). «Եթե այսօր արցախահայությունը մասնակցեր Հայաստանի Հանրապետության նախագահի

ընտրություններին, ապա բացարձակ մեծամասնությամբ իր ձայնը կտար ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին»:

«Հայաստանի Հանրապետություն», 19. 09. 1996, վերահրատարակված՝ Լ. Տեր - Պետրոսյան. Վերադարձ, էջ 72:

* * *

ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ (ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար). «Մեծարգո Լևոն Հակոբի, ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ: Բարձր եմ գնահատում Ձեր տնական ավանդը ինչպես արցախյան ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման ու նրա համակողմանի նվաճումների ապահովման ասպարեզում, այնպես էլ՝ Հայաստանի ու Արցախի տարածքներում Հայոց պետականության վերականգնման ու ամրապնդման պատմակշիռ գործում: Կրկին կարևորելով նորանկախ Հայաստանի առաջին նախագահիդ նշանակալից հորելյանը՝ որպես էական մի շրջափուլ ոչ միայն Ձեր, այլև ընդհանրապես հայրենի հասարակական-քաղաքական կյանքում, ի սրտե մաղթում եմ Ձեզ արցախյան արևշատություն, անձնական երջանկություն և հարաճուն հաջողություններ. Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայան. 2005 թ. հունվարի 9»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 09. 01. 2005, առաջին անգամ հրատարակված՝ Լ. Տեր - Պետրոսյան. Վերադարձ, էջ 124:

* * *

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (ՀՀ ազգային անվտանգության պետական վարչության նախագահ). «Հայաստանի Հանրապետության Մեծարգո նախագահ. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական վարչության անձնակազմը շնորհավորանքի իր խոսքն է հղում Ձեզ, Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ: Հասարակական նշանավոր անհատի, պետական գործչի տարեկիցը լոկ օրացույցային թվով չի արտահայտվում: Այն ավելի խորքային իմաստ ունի, որը ժամանակն է իմաստավորում: Վերջին տասնամյակում Ձեր անվան հետ են կապված մեր ազգային ոգևորումները, մեր խիզախումները, մեր հավատը, մեր հուսաբեկումն ու հույսը: Քաղաքական այս վայրիվերումներում Ձեր կեցվածքը և խորաթափանցությունը բարդ խնդիրները հանգեցնում են ամենապարզ լուծումների: Դուք եք մեր պետության քաղաքական հավասարակշռության լծակը: Դուք միաժամանակ կրում եք Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի և՛ պատիվը, և՛ լուծը: Դուք միաժամանակ և՛ վախան եք հակառակորդների դեմ, և՛

թիրախ՝ նրանց համար: Ձեր շնորհիվ է, որ կանգնում են ազգային պետության հիմնասյուները: Հիսուն տարին քաղաքական գործչի համար հասունացման և կենսափորձի ամենածաղկուն շրջանն է: Առողջություն ենք մաղթում Ձեզ և երկար կյանք՝ ի բարօրություն մեր երիտասարդ պետության. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական վարչություն»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 9. 01. 1995:

* * *

ԷԴՈՒԱՐԴ ԵԳՈՐՅԱՆ (ՀՀ ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախագահ). «Որպես Նախագահին անհրաժեշտ բնավորության գիծ, ես կընդգծեի վճիռներ կայացնելու նրա ունակությունը: Ընդհանրապես, պատասխանատվություն ունեցող մարդու համար այնքան էլ դյուրին չէ արագ կողմնորոշվելն ու ճիշտ վճիռներ կայացնելը, քանի որ մշտապես մտահոգված է այդ վճիռների հետևանքներով: Դժվարագույն, կարևորագույն պահերին արագ և հիմնականում անսխալ վճիռներ կայացնելու ունակություն ունի Նախագահը: Նրա կայացրած վճիռները, որպես կանոն, զգացմունքներին տուրք չեն տալիս և հաճախ հանգստություն ու վստահություն են հաղորդում: Լևոն Տեր-Պետրոսյանը օժտված է գործերի ընթացքը մեծ հաշվով որսալու, հասկանալու շնորհքով: Տեղի են ունենում շատ դեպքեր, կայացվում են շատ որոշումներ, բայց ընդհանուր ընթացքը, ուղղությունը գտնելու, կանխատեսելու և մի քանի «փաստերի» պատճառով չխճճվելու ունակությունը էական նշանակություն ունի քաղաքականության ստրատեգիան որոշելու համար: Լևոն Տեր-Պետրոսյանը ավելի հիմնավոր բնավորության և ավելի հիմնավոր գիտելիքների շնորհիվ առանձնանում է «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամներից: Իսկ «Ղարաբաղ» կոմիտեի որոշ անդամների հեռանալը ՀՀԾ-ից և Նախագահից, ես բացատրում եմ նրանով, որ նրանց մեծ ամբիջիաները չեն համապատասխանում իրենց գիտելիքներին և բնատուր հնարավորություններին»:

«Հայք», 19. 09. 1996:

* * *

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ (ՀՀ արտաքին գործերի նախարար). «Հայաստանի Հանրապետության Նախագահ պրն. Լ. Տեր-Պետրոսյանին. Մեծարգո պարոն նախագահ, սրտանց շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 50-ամյակի առթիվ: Ցանկանում եմ քաջառողջություն, արևշատություն, ամենայն բարին: Մեր ժողովրդի համար անցած տարիների ճակատագրական շրջանում անկախ հայոց պետականության

կերտումը, դարաբաղյան խնդրի լուծման ուղղությամբ շոշափելի ձեռքբերումները, Հայաստանը դժվարագույն պայմաններում ամուր և կայուն հանրապետություն դարձնելու գործը՝ միննույն ժամանակ խարսխված ժողովրդավարության անսասան հիմքերի վրա, վստահ ու խելամիտ քայլերով երկրի ընթացքը տնտեսական բարեփոխումների խորին ճանապարհով՝ միտված ժողովրդի բարօրության ապահովմանը, այն նվաճումներն են հանդիսանում, որ Ձեզ, որպես առաջնորդի, փառքի են արժանացնում: Հպարտությամբ լի մաղթում եմ, որ իր բարեհաջող ավարտին հասցնեք այդ նվիրական գործը: Ընդունեք խնդրեմ, պարոն նախագահ, մեր բոլորիս հարգանքի խորին հավաստիքը: Լավագույն ցանկություններով՝ Ալեքսանդր Արզումանյան, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ. 9 հունվարի, 1995 թ.»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/8, 9. 01. 1995:

* * *

ՖԵԼԻՔՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (Գերմանիայի Դաշնությունում ՀՀ դեսպան). «Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Լևոն Տեր-Պետրոսյանին. Մեծարգո պարոն Նախագահ, սրտանց շնորհավորում եմ Ձեզ Ձեր 50-ամյակի առթիվ: Հիսնամյակը ամեն մի մարդու կյանքում կարևոր ուղենիշ է. հնարավորություն է տալիս հետադարձ հայացք նետել անցյալին, ամփոփել ապրածն ու տեսածը, և, միաժամանակ, ի սպաս դնելով ձեռք բերված իմաստությունն ու փորձը, ընդունել Ապագայի և ճակատագրի մարտահրավերը: Անցյալի Ձեր գործունեությունը, հիրավի, Ձեզ հպարտանալու իրավունք է տալիս և Պատմությունն է, որ, համոզված եմ, լիովին կփոխհատուցի Ձեզ: Այստեղ՝ որպես ականատես կարող եմ վկայակոչել այն բախտորոշ թույլները, երբ Ձեր վճռականությունից և հաստատակամությունից մեծապես կախված էր մեր ժողովրդի ընտրած ուղու ճակատագիրը, և թե ինչպես Դուք գտնում էիք առաջին հայացքից ոչ ակնհայտ, բայց միակ հնարավոր լուծումը: Շատերը Ձեզ հաճախ չէին հասկանում, բայց Դուք խիզախությունն ունեցաք հավատարիմ մնալ Ձեր ընտրած ճանապարհին: Ապագայում Ձեզ շատ անելիքներ են սպասում. այդ արդյունքներից կախված է ոչ միայն անձնապես Ձեր, այլ նաև մեր երկրի բախտը: Ձեր ուսերին դրված է հայկական պետականության հիմնարկեքի և կայացման կարևորագույն խնդիրը: Տա Աստված Ձեզ Բմաստնություն և Կորով՝ պատվով կրելու այդ դժվարին բեռը: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, ամուր կամք, տոկունություն և լիակատար երջանկություն: Աստված Ձեզ պահապան: Միրով՝ Ֆելիքս Մամիկոնյան»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 9. 01. 1995:

* * *

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀՀ պաշտպանության փոխնախարար, ԵԿՄ վարչության նախագահ). «Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, Մեծարգո Լևոն Հակոբի, իմ և Երկրապահ Կամավորականների միության անունից շնորհավորում եմ Ձեզ Երկրապահի, Հաղթանակի և խաղաղության օրվա, Շուշիի ազատագրման 13-րդ տարեդարձի և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակի կապակցությամբ: Մենք՝ երկրապահներս, գնահատում ենք Ձեր ավանդն ու ներդրումը հայոց պետականության կայացման, հայոց բանակի կազմավորման և հզորացման և հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում ձեռք բերած հաղթական զինադարձի հարցում: Անգնահատելի է նաև Ձեր դերը հանրապետությունում ժողովրդավարության կայացման և միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության հեղինակության բարձրացման գործում: Մեծարգո Լևոն Տեր-Պետրոսյան, Հայոց նորօրյա պատմության մեջ Դուք կաք և մնում եք որպես հաղթանակի նախագահ: Մենք՝ երկրապահներս, որ մարտնչել ենք Ձեր գերագույն զլխավոր հրամանատարության ներքո, հպարտանում ենք Ձեզանով, հպարտանում ենք, որ Դուք կրում եք ԵԿՄ առաջին անդամատոմսը Սպարապետ Վազգեն Սարգսյանի ստորագրությամբ և վստահ ենք, որ պատմության մեջ Դուք կմնաք որպես Արցախի անկախությունն ապահոված և հայկական սահմաններն ընդարձակած նախագահ: Եվս մեկ անգամ շնորհավորում ենք Ձեզ, ցանկանում առողջություն, ընտանեկան երջանկություն և խաղաղություն հայոց աշխարհին. ՀՀ պաշտպանության փոխնախարար, ԵԿՄ վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մ. Ս. Գրիգորյան»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 7. 05. 2005:

V

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ («Հայ Բարեգործական Ընդհանուր Միության» նախագահ). «Նորին Վսեմություն, Լևոն Տեր-Պետրոսյան, Նախագահ Հայաստանի Հանրապետության, Երևան, Հայաստան. Վսեմաշուք Նախագահ, տակալին բոլորս կ(ապրինք Ձեր այցելության կախարդիչ մթնոլորտին մեջ. Ձեր ու տիկին Տեր-Պետրոսյանին Ամերիկա այցը որքան հոգեկան բաւարարություն պատճառեց մեր գաղութին՝ նոյնքան

կենսական դարձաւ մեր հայրենիքի քաղաքական ու տնտեսական հեռանկարներու առումով: Մեզի համար կարծէք երազ մըն էր որ իրականացաւ երբ բախտաւորութիւնն ունեցանք մեր յառաջացեալ տարիքին վկայելու հաստատումը անկախ Հայաստանի մը, որուն նախագահը իր պարթեւ հասակով եկաւ կանգնիլ աշխարհի մեծամեծներէն նախագահ Քլինթոնի կողքին, Ուաշինկթընի մէջ: Գիտենք թէ տակաւին կը գտնուիք դժուար ժամանակներու մէջ, սակայն վստահ ենք Ձեր այցելութիւնը Ամերիկա՝ եկաւ վկայելու այս երկրի իշխանութեան թէ՛ Հայաստանը ապրելո՞ւ, վերականգնելու եւ ստեղծագործ կեանքի ատակ եւ արժանի երկիր մըն է: Հետեւաբար կը յուսանք որ Ձեր քաղաքական ու տնտեսական յաջողութիւնները պիտի նպաստեն խաղաղութեան վերահաստատման: Այսօր մեր Ժողովուրդը ամէնէն աւելի կարիքն ունի խաղաղութեան: Մենք ուրախ ենք որ այսօրուան փոթորկալի կեանքին մէջ Հայաստանը Ձեզի նման խոհեմ եւ ինքնավստահ նաւապետ մը ունի եւ վստահ ենք որ շնորհիւ Ձեր կամքին եւ իմաստութեան մեր հայրենիքի նաւը պիտի հասնի ապահով նաւահանգիստ: Դուք եւ Ձեր պատուական Տիկինը մեզի համար մինչեւ հիմա խօսք ու լուսանկար էիք, ճշմարիտ հրճուանք եղաւ այդ պատկերներուն եւ խօսքին սահմաններէն անդին ճանչնալ իրական ու պատուական մարդը Ձեր մէջ, մանաւանդ խորունկ հաւատքով հայր: Ձեր հեզութեան ու խոնարհութեան մէջ զգացինք Ձեր ապրումներուն հզօրութիւնը եւ պատմական առաքելութեան մը սահմանուած առաջնորդի մը գիտակցութիւնը: Ձեզ եւ Տիկին Տէր-Պետրոսեանը ճանչնալը անձնական մեծ բաւարարութիւն եղաւ մեզի համար: Աւելին՝ եղաւ հոգեկան հարստութիւն մը, եւ ատով մենք աւելի կապուեցանք Հայաստանին եւ մեր հոգին աւելի գօտեպնդուեցաւ Հայաստանի փրկութեան ու բարգաւաճման հեռանկարներու երաշխիքով: Հաճեցէք ընդունիլ մեր խորին յարգանքն ու սերը ուղղուած Ձեզի եւ Ձեր պատուական Տիկնոջ: Խորին յարգանք՝ Ա. Մանուկեան»:

ՀՀ Առաջին նախագահի արխիւ, թղթ. 03/4, 17. 08. 1994:

* * *

ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆ (Մփյուռքահայ հեղինակավոր մտավորական, գրող, գրականագետ)։ «Բնծի համար միշտ հպարտութեան առիթ եղած է գիտնալ թէ նորանկախ Հայաստանի նախագահը մտաւորական մըն է, թրծուած ակադեմական տիպիփիլինին մէջ, եւ հմուտ՝ հին հին ազգաց պատմութեան ու մշակոյթի բաւիղներու բովանդակութեան ուր կը մխրճուին մեր ազգին ալ արմատները: Պատմաբան, բանասէր, լեզուագէտ, ըմբոստ ու ժողովրդային ոգիի պարագլուխ - քանի՞ ազգ աշխարհի երեսին օժտուած է նման դեկավարով մը (միտքս կու գայ Չեխիոյ Վաչսլաւ Հաւելը, Պոլիվիոյ նախագահական ձախողած թեկնածու Վարկաս Լոսան, Սենեկալի Հուֆուէթ Պուան-յին, եւ անշուշտ Ֆրանսայի անթիւ նախագահները որոնք մտքի մարդ ալ եղած են, յատկապէս Անտրէ Մալրոն որ նախարար էր)... Նոյն ուրախութիւնը ունէի երբ Դաշնակցութիւնը Սօս Սարգսեանը նշանակեց իբր նախագահական թեկնածու: «Բան մը փոխուած է կուսակցութեան մէջ» խորհեցայ այդ ատեն, մեծ հրճուանքով, ու քիչ մը զարմանքով որովհետեւ լաւ գիտէի թէ Դաշնակցութիւնը, իր սկիզբէն իսկ արեւելահայ դեկավարութեան տակ եւ իր հերոսապաշտ եւ ժողովրդապաշտ ռոմանթիզմէն տարուած, արհամարհանք ունեցած էր մտաւորական եւ արուեստագէտ տարրին հանդէպ, զայն որակելով «անգործնական», «երազապաշտ» եւ «անվստահելի»: Այդ նոյն վերագրումին ես ալ զոհ գացած եմ սկիզբի օրէն երբ 28 տարեկանիս հոգեբանական պահանջը զգացի շարքերը մտնելու, տարած «ընկեր» բառին միսթիքէն... Հայաստան հասնելու

օրէս փորձեր էի նախագահին մասին կարելու մտաւորականներու կարծիքը շօշափել ու կազմել իմ անձնական գաղափարս անոր անձին շուրջ, անկախ կուսակցական կիրքերու ստեղծած պատկերէն: Բնագործ գիտցած եմ թէ ճշմարտութիւնը «գազաթ մըն է որ կը մազլցիս եւ ոչ թէ ծաղիկ մը որ կը քաղես»: Ծանօթ էի մեր կուսակցութեան ժխտական կեցուածքին իր հանդէպ որ մասամբ արդիւնք էր մեր մամուլին անփորձ ու կրքոտած գրիչներուն որդեգրած յարձակողական եւ նախատական ոճին: Կար նաեւ դարու ոգին որ ժողովրդավարութեան սկզբունքին սխալ մեկնաբանութեամբ կը կարծէ թէ ազատ կարգերու մէջ ամէն ինչ արտօնուած է ամէն անհատի: Որոշեցի չկարդալ մեր մամուլը: Կային նաեւ նախագահին գործած սխալները, եւ յատկապէս մէկ հատ մը: Այսպէս, խստօրէն դատապարտելի կը գտնէի Դաշնակցութեան պատասխանատու եւ խորհրդանշանական ընկերը Հայաստանէն աքսորելու որոշումը, զայն նկատելով ոչ միայն կամայական խախտում սահմանադրական ընդունուած կարգերու այլ նաեւ բարոյական սխալ՝ հանդէպ կուսակցութեան մը որ իր հայրենասիրութիւնը աւանդութեան ու հաւատամքի վերածած է մէն մի ընկերոջ կեանքին մէջ... Աւստրալիա եղած ատենս, որոշած էի չընդունիլ Հայաստանի պետութեան հիւրի հանգամանքը՝ մեր կուսակցութեան հանդէպ նախագահին նախատական արարքին հետեւանքով: Սակայն հիմա որ Հայաստան եմ, որոշած եմ չմերժել տեսակցութեան առաջարկը որ տանտէրս ազնուութիւնը ունի ինծի ուղղելու... Ճիշդ կէսօրին նախագահին հիւրասենեակին դուռը կը զարնեմ: Բնքն է բացողը: Տպաւորիչ, ներկայանալի ու մշակուած անձ մը, որ զիս կ(առաջնորդէ կաշիէ լայն բազկաթոռին: Բնքն է հիւրընկալը եւ ուրեմն ինքը կ(որոշէ խօսակցութեան օրակարգերը - Սփիւռքեան կառոյցներ, Հայաստանի Սահմանադրութիւն, երկրին մտաւորական կացութիւնը, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ: Կը խօսինք Յակոբ Օշականի մասին գորկարդացած է մեծ հաճոյքով: Կ(առաջարկեմ Օշականի գործերու հրատարակութիւն եւ ռուսերէնի թարգմանութիւն Հայաստանի մէջ: Համամիտ է բայց «պէտք է սպասել աւելի բարեյոյս օրերու»: Լայն զարգացումի տէր, խոհուն եւ ուշադիր խօսակից մը, անձնաւորութիւն մըն է նախագահը: Տպաւորութիւնս դրական, նոյնիսկ յարգալից է»:

«Կամք», Փարիզ, 16. 02. 1994:

* * *

Հ. ՄԱՀԱԿ ԸԵՄՃԵՄՅԱՆ (Վենետիկի «Բազմավէպ» հանդեսի խմբագիր). «Ազնիւ եւ սիրելի բարեկամս՝ Տիար Լ. Տեր-Պետրոսեան. Պիտի ուզէի, որ երկտողս Ձեզ գտնէ կատարեալ առողջութեամբ եւ կորովով լեցուն՝ շարունակելու համար Ձեր այդքա՛ն օգտակար գործը, որ սկսած էք՝ յօգուտ հայ մշակոյթին: Կ. Ուլուհոճեանի միջոցով լուր դրկած էիք փափաքով, որ լոյս տեսնէ Ձեր աշխատութիւնը՝ դրկուած Բազմավէպի խմբագրութեան: 1987 տարւոյն Բազմավէպին մէջ արդէն հրատարակեցինք Ձեր յօդուածին առաջին մասը, զարմանալով միանգամայն, թէ նման զանձ ինչո՞ւ մնացած է ցարդ դարակին մէջ: Ամէն կերպով կը գնահատեմ Ձեր աշխատութիւնը, որու նմանը դժուար է գտնել: Այսքան խոր, գիտութեամբ լեցուն, հմտութեամբ տարածուն հեղինակը թող վստահ ըլլայ, թէ անկեղծօրէն կը գնահատուի այս ուսումնասիրութիւնը: Յօ-

դուածին երկրորդ մասը, այն է՝ բնագրային բաժինը, լոյս պիտի տեսնէ 1988-ի Բազմավէպին մէջ, որ հաւանաբար տարւոյս ընթացքին հրատարակուի: Միաժամանակ ֆրանսերէն ընդարձակ համառոտութիւնը, որ կատարած էք, – թէեւ առաջին յօդուածին համառոտութիւնն է եւ գուցէ հոն լավագոյն էր հրատարակել, – 1988-ի թիւին մէջ կը դնենք: Այս գոյգ մասերը միասին պիտի անցընենք «Բազմավէպ» մատենաշարին մէջ, որպէսզի նման գանձ առանձին պահպանուի, եւ ուսումնասէրներ դիւրութիւն ունենան մօտենալու անոր: Սրտանց կը մաղթեմ յաջողութիւն եւ նորանոր նուաճումներ, որու համար եմ աղօթարար չ. Սահակ Ճեմճեմեան»:

ՀՀ Առաջին նախագահի արխիւի, թղթ. 03/01, 30. 04. 1988: Ճեմճեմեանի նամակում խոսքը վերաբերում է Լ. Տէր-Պետրոսյանի «Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կյանքում» աշխատությանը:

* * *

ՌՈՊԵՐ ՀՍՏԵՃՅԱՆ (Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի խմբագիր). «Վսեմաշուք Պր. Լեւոն Տէր-Պետրոսեան Նախագահ Հայաստանի Հանրապետութեան. Մեծայարգ եւ շատ սիրելի Նախագահ, այս նամակով անգանցառելի պարտականութիւն նկատեցի Ձեզ անկեղծօրէն շնորհաւորել այն հոյակապ ճառախօսութեան համար, զոր ըրած էիք 13 Յուլիսին, ՀՀԾ-ի Համագումարի առիթով: Կրնաք վստահ ըլլալ, մեծայարգ պր. Նախագահ, որ իմ այս զգացումներս այստեղ կը բաժնեն մեծ թիւով ազգայիններ, որոնք մեր թերթին մէջ յափշտակութեամբ կարդացին այդ ճառախօսութիւնը: Ես մէկ գիշերուան մէջ ամբողջովին Արեւմտահայերէնի վերածելով ստացուած թուականին յաջորդ օրն իսկ (15 Յուլիս), մեր թերթին մէջ հրատարակեցի այդ ճառախօսութիւնը: Արեւմտահայերէնի վերածումը, զոր անհրաժեշտ կը նկատեմ որպէսզի մեր բոլոր ընթերցողները լիակատար ըմբռնեն պատճենին համակ գեղեցկութիւնը, պէտք է ըսեմ, ըրի բացառիկ հաճոյքով: Անձնական համոզումս այն է որ աշխարհի վրայ սակաւաթիւ, շատ սակաւաթիւ Հանրապետութեան Նախագահներ կրնան խօսիլ այնքան իրատես, այնքան անկեղծ, այնքան կառուցողական, այնքան նաեւ ինքնաքննադատական կամ ինքզինք եւս վերլուծող, մանաւանդ այնքան ակադեմական մերձեցումով, որքան Դուք ըրած էք: Կը հաւատամ որ Ձեր ճառախօսութիւնը ակադեմական խօսքի, քաղաքական իրավիճակներու վերլուծման խնջոյք մըն էր, նաեւ վարպետ վերլուծում մը ընդդիմադիրներու կողմէ միշտ ի գործ դրուած կոյրզկուրայն ու ամբոխավար քննադատութեան, որուն ելակէտները այնքան շուտ կը մոռցուին երբ ընդդիմադիրները իշխանութիւն կը դառնան: Այս բոլորը շատ լաւ ըսուած էին եւ անգամ մը եւս կը վկայէին ձեր իմաստուն քաղաքականութեան ու փայլուն իմացականութեան մասին: Մեծայարգ ու սիրելի Պր. Նախագահ, մեր վերոյիշեալ թերթէն օրինակ մը կը ներփակեմ այս նամակիս ու առիթէն օգտուելով անգամ մը եւս Ձեզի կը մատուցանեմ իմ անձնական ու Մարմարա-ի թերթի գործընկերներուս անհուն սէրն ու վստահութիւնը Ձեզի նկատմամբ: Ինչպէս Երեւանի մէջ Ձեր բարեհաճ ընդունելութեան ընթացքին ըսած էի, մեր բոլորին

աղօթքը ձեր յաջողություններուն համար են: Յարգանքով: Ռ. Հատտէճեան, խմբագիր Մարմարա օրաթերթի, Բսթանպուլ, 21 Յուլիսի 1997»:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, թղթ. 03/4, 21. 07. 1997:

VI

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Ա. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐՔԵՐ

1. Մբրահիմ Խոստովանողի «Վկայք Արևելիցը» (բնագրագիտական հետազոտություն), Երևան, 1976, 204 էջ:

[Գրախոսություններ]. Հ. Մելքոնյան. ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, №5, էջ 109–110, Michel van Esbroeck. Abraham le Confesseur (V^e s.) traducteur des passions des martyrs perses, *Œuvres complètes*. – «Analecta Bollandiana», t. 95, Bruxelles, 1977, p. 169–179.

2. Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ. – «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 12. Ստորական աղբյուրներ Բ», Երևան, 1982, 266 էջ:

[Գրախոսություններ]. Հ. Մելքոնյան. ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 6, էջ 96–98, G. Dondnyan. «Revue des études Arméniennes», N.S., t. XVII, Paris, 1983, p. 658–662.

3. Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, 60 էջ:

4. Древнеармянская переводная литература. Ереван, 1984, 52 с.

5. La littérature arménienne ancienne de traduction, trad. franç. par Aunda Tcharkhtchyan, Erevan, 1984, 48 p.

6. Textes Arméniens relatifs à S. Iphrem, édites par Lrvon Ter-Pntrossian, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 473: Scriptores Armeniaci, tomus 15, Lovanii, in Aedibus E. Peeters, 1985, 123 p.

7. Ստորինների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԲ–ԺԳ դարերում. – Հայագիտական մատենաշար «Բազմավեպ», թիվ 28, Վենետիկ – Ս. Ղազար, 1989, 89 էջ (ֆրանսերեն ամփոփում՝ էջ 81–86):

8. Ancient Armenian Translations («Հայ հին թարգմանական գրականություն» գրքի անգլերեն և արևմտահայերեն թարգմանությունները. անգլերենի թարգմանիչ՝ Գրիգոր վրդ. Մագուստյան, արևմտահայերենի թարգմանիչ՝ Նուպար Կուպեյան), St. Vartan Press, New York City, 1992, 112 p.

9. Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից. Ե դար (Վարդապետություն և սրբոյն Գրիգորի, Յաճախապատում ճառք, Հովհան Մանդակունուն վերաբերվող ճառերը, Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի»), հրատարակիչ Եզնիկ Արքեպիսկոպոս Պետրոսյան, Սոփի, 1993, 80 էջ.

10. *Դավթի Սաղմոսների գիրքը. թարգմանություն գրաբարից, «Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների. արևելահայերեն նոր թարգմանություն», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 735–832:*

11. *The Armenian-Syriac cultural relations (Արաբահալ Խոստովանողի «Վկայք Արևելիցը» հետազոտության արաբերեն թարգմանությունը), translated by Boghos Sarajian, Sidawi Printing House, Damascus – Syria, 1997, 253 p.*

12. *Խաչակիրները և հայերը, հ. Ա. Ուսումնասիրություն և թարգմանություններ, «Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության», Երևան, 2005, 551 էջ:*

[Գրախոսություններ]. Թորոս Թորանյան. «Արարատ» շաբաթաթերթ, Բեյրութ, № 23–29, 12. 2005, Ազատ Բոգոյան. «Հատաճ» օրաթերթ, Փարիզ, 4. 06. 2006, Ազատ Բոգոյան. ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 2006, № 1, էջ 309–313, Գ. Հարությունյան. ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, № 3, էջ 245–248:

13. *Խաչակիրները և հայերը, հ. Բ. Պատմա-քաղաքագիտական հետազոտություն – Գահաժառանգության իրավունքը և իշխանության «լեգիտիմությունը» Կիլիկյան Հայաստանում, «Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության», Երևան, 2007, 672 էջ:*

[Գրախոսություն]. Ազատ Բոգոյան. ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 2007, № 3, էջ 220–230:

14. *Ancient Armenian Translations. translated from Armenian by professor of Hokkaido University Toda Satoshi, Tokyo, 2013, 25 p.* («Հայ հին թարգմանական գրականություն» գրքի հայերենից կատարված ձայններեն թարգմանությունը):

ՀՈՂՎԱԾՆԵՐ

15. *Արաբահալ Խոստովանողը և իր գրական ժառանգությունը.*– «Էջմիածին», 1971, № 3, էջ 56–63:

16. *Место жития Милеса в сборнике Маруты Майферкатского.*– «VII годовичная научная сессия Ленинградского отделения Института востоковедения Академии наук СССР (краткие сообщения)». М.–Л., 1971, с. 38–40.

17. *Житие Милеса и его переводы.*– «Вестник общественных наук» АН АрмССР, 1971, № 10, с. 45–53.

18. *Сборник Маруты Майферкатского как историко-литературный памятник (проблемы источниковедения).*– Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук. Л., 1972.

19. *Два сирийских агиографических памятника, известных по армянскому переводу (мантирий Иаздандухт и мантирий Бардишо).*– «Палестинский сборник», вып. 25 (88). Л., 1974, с. 144–151.

20. *Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների.*– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 139–154:

21. Մաղմուսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը.– «Էջմիածին», 1975, № 1, էջ 41–51, № 4, էջ 37–45, № 6, էջ 58–64, № 9, էջ 49–57, 1976, № 8/9, էջ 22–24:
22. О значении предисловия к сборнику Маруты Майферкатского– «Древний Восток», № 2. Ереван, 1976, с. 238–250, резюме на английском, с. 310.
23. Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»-ն և ժամանակի ասորական գրականությունը.– «Ներսես Շնորհալի. Հոգևածների ժողովածու», Երևան, 1977, էջ 201–211:
24. О значении древнеармянских переводов сочинений Ефрема Сириня.– «Конференция по истории средневековой письменности и книги. Тезисы докладов». Ереван, 1977, с. 93–94.
25. К вопросу о датировке «Истории Тарона» (по поводу книги К. В. Айвазяна).– «Вестник Ереванского университета», 1977, № 3, с. 143–159. Резюме на французском — Patrick Donabidian. «Revue des Études Arméniennes», N. S. 14, Paris, 1980, p. 481–482.
26. Характерные черты начального периода армяно-сирийских литературных отношений. «Тезисы докладов III всесоюзной конференции семитологов, посвященной памяти акад. Г. В. Церетели». Тбилиси, 1977, с. 98–99.
27. Կցուրդը Ս. Եփրեմի Խորին Ասորւոյ (բնագրական ճշգրտումներ).– «Հանդես Ամսորյա», № 92, Վիեննա, 1978, էջ 15–48:
28. «История Тарона» в свете «критики» К. В. Айвазяна.– «Литературная Армения», 1978, № 2, с. 102–108. Резюме на французском — Patrick Donabidian. «Revue des Études Arméniennes», N. S. 14, Paris, 1980, p. 481–482.
29. Յակոբայ Սրճեցւոյ «Վարք սրբոյն Դանիէլի Գալաշացւոյ».– «Էջմիածին», 1979, № 3, էջ 22–40:
30. L'attribution du recueil des passions des martyrs perses Ռ Maroutha de Maypherqat.– «Analecta Bollandiana», t. 97, Bruxelles, 1979, p. 129–130.
31. Հայերը միջնադարյան Մծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում.– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 80–92:
32. Հայ-ասորական հարաբերությունների մեծագույն հետազոտողը [Երվանդ Տեր-Մինասյանի (1879–1974) ծննդյան 100-ամյակի առթիվ].– «Էջմիածին», 1980, № 2–3, էջ 64–69:
33. Մաշտոցյան ավանդները և հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում.– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 107–119:
34. Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն քնձայութեան» երկի հայերեն թարգմանության նախօրինակի հարցի շուրջը.– «Էջմիածին», 1981, № 11–12, էջ 42–48:
35. Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման.– «Էջմիածին», 1982, № 4, էջ 45–52:

36. Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնությունը» և թարգմանության տեսության հարցերը V դարի հայ մատենագրության մեջ.– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 56–68:
37. Լրջմիտ պատմաբանը և հմայիչ մարդը՝ Հայկ Մելքոնյան.– «Էջմիածին», 1983, № 1, էջ 57–60:
38. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության նախօրինակը.– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 2–3, էջ 264–278:
39. Սուրբ Գրիգորի վարդապետության արձագանքը (՝) խաչքարային արվեստի խորհրդապաշտության մեջ.– «Էջմիածին», 1984, № 4, էջ 47–51:
40. Դանիելի մարգարեության Թ գլխի աստրերենից կատարված դասական հայերեն թարգմանությունը.– «Բանբեր Մատենադարանի», № 14, Երևան, 1984, էջ 187–194:
41. La plus ancienne traduction arménienne des Chroniques: étude préliminaire.– «Revue des études Arméniennes», N. S. 18, Paris, 1984, p. 215–225.
42. «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի ներածություն. «Գիրք Ծննդոց», քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985, էջ 5–78:
43. «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ասորական աղբյուրները.– «Բանբեր Մատենադարանի», № 15, Երևան, 1986, էջ 95–109:
44. Сиро-армянские литературные связи в IV–V вв. (Роль сирийской литературы в формировании древнеармянской словесности).– Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук. Л., 1986, 34 с.
45. Греческие и сирийские литературные памятники, сохранившиеся в древних армянских переводах. – В кн.: Армянская и русская средневековые литературы. Ереван, 1986, с. 57–75.
46. К методологии изучения классических армянских переводов с сирийского.– «Тезисы докладов Международной конференции по средневековой армянской литературе». Ереван, 1986, с. 202–203.
47. Ասորիների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԲ–ԺԳ դարերում.– «Բազմավեպ», Վենետիկ, 1987, էջ 122–161:
48. Սուրբ Հերակլիդիոս Կիպրացու վարքի հայերեն թարգմանությունը.– «Էջմիածին», 1987, № 9–10, էջ 102–104:
49. Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը.– «Էջմիածին», 1987, № 11–12, էջ 83–89, 1988, № 5–6, էջ 44–54, 1989, № 4–6, էջ 90–99:
50. Ասորական աղբյուրները ԺԲ–ԺԴ դարերի հայ-ասորական հարաբերությունների մասին.– «Բազմավեպ», Վենետիկ, 1988, էջ 112–154 (էջ 149–154. ֆրանսերեն ամփոփում):
51. Սովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հոբելյանի առթիվ.– «Հայաստանի Հանրապետություն», 5 հոկտեմբերի 1991, վերահրատարակված՝ Լևոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, Երևան, 2006, էջ 235–239:
52. Լևոն Խաչիկյանի «Եղիշեի Արարածոց մեկնությունը» գրքի առաջաբանը, Երևան, 1992, էջ 7–18:

53. *Préface du livre «Claude Mutaflan, Le royaume arménien de Cilicie. XIIe-XIVe siècle», Paris, 1993, p. 8-11.*

54. Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը» Եզնիկ Կողբացու աղբյուրներից. – «Բանբեր Մատենադարանի», № 16, Երևան, 1994, էջ 7–15:

55. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 50-ամյա հոբելյանի առթիվ. – «Հայաստանի Հանապետություն», 26 մայիսի 1994, վերահրատարակված՝ Լևոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, էջ 411–416:

56. Երևանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի առթիվ. – «Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի 1994, վերահրատարակված՝ Լևոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, էջ 439–443:

57. Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմաաշակութային արժեքը և գիտական նշանակությունը. – «Աստվածաշնչական Հայաստան. միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», Երևան, 2005, էջ 454–460: Արտատպված «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի՝ Լ. Տեր-Պետրոսյանի հեղինակած ներածությունից. «Գիրք Ծննդոց», քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985, էջ 29–40:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

58. Памятники армянской агиографии, вып. I, перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян. Ереван, 1973, 328 с. – «Палестинский сборник», вып. 25(88). Л., 1974, с. 183–185.

59. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, № 8. Ասորական աղբյուրներ – Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան 1976, 478 էջ (Иноязычные источники об Армении и армянах, т. 8. Сирийские источники, вып. 1, перевод с оригинала, предисловие и примечания Г. Г. Мелконяна). Ереван, 1976, 478 с. – «Византийский временник», т. 39. М., 1978, с. 259–260.

60. GUY LAFONTAINE. La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien, «Corpus Scriptorum Christianorum Orientalium» 382 Arm. 7 (texte), 383 Arm. 8 (traduction), Louvain, 1977 (ԳԻ ԼԱՖՈՆՏԵՆ. Ափրահատ Ասորու երկերի հայերեն թարգմանությունը, 2 հատորով, Լուվեն, 1977). – ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 242–244:

61. LOUIS LELOIR. Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», t. I (vol. 353 Subs. 42), 1974; t. II (vol. 361 Subs. 43), 1975; t. III (vol. 371 Subs. 47), 1976, t. IV (vol. 379 Subs. 51), Louvain, 1976 (ԼՈՒԻ ԼԸԼՈՒՐ. Հայոց «Վարք Հարանցի» լատիներեն թարգմանությունն ըստ Մխիթարյան Հայրերի 1855 թ. հրատարակության, հ. 1–4, Լուվեն, 1974–1976). – ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 255–257:

62. Moses Khorenats'i, History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, England, 1978 (Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, անգլերեն թարգմանություն և ծանոթագրություններ Ռոբերտ

Թոմսոնի, Հարվարդի համալսարանի հրատարակչություն, 1978)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 268–270:

63. Prof. Thomson's Edition of Khorenatsi Reviewed in Armenia.– «Armenian Mirror-Spectator», Boston, 21 Febr. 1981 (նախորդ գրախոսության անգլերեն թարգմանությունն է):

64. IRÉNÉE DE LYON. Nouveaux fragments arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis. Introduction, traduction latine et notes par Charles Renoux. «F. Graffin, Patrologia Orientalis», t. XXXIX, fasc. 1, No 178, Brepols, Turnhout/Belgique, 1978 (ԻՐԵՆԵՆՍ ԼՈՒԳԴՈՆԱՅԻ. Հայերեն նոր հասվածներ «Ընդդիմ հերձուածոց» և «Ցոյցք» երկերից, ներածություն, լատիներեն թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Ռենուի, Տյուրնհաուտ-Բելգիա, 1978)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 300–301:

65. PHILON D'ALEXANDRIE, Quaestiones et Solutiones in Genesim, I et II, e versione armeniaca. Introduction, traduction et notes par Charles Mercier, «Les oeuvres de Philon d'Alexandrie, publiées sous le patronage de l'Université de Lyon. 34A», Paris, 1979 (ՓԻԼՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ. Մեկնութիւն Ծննդոց, ներածություն, թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Մերսիերի, Փարիզ, 1979)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, էջ 302–303:

66. FOLKER SIEGERT. Drei hellenistisch-jüdische Predigten. Ps-Philon: «Über Jona», «Über Simson» und «Über die Gottesbezeichnung, wohlthätig verzehrendes Feuer», I, Übersetzung aus dem Armenischen und sprachliche Erörterungen (Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament. 20), Tübingen, 1980 (ՖՈԼԿԵՐ ՋԲԵՐՏ. Կեղծ-Փիլոնի երեք հունա-եբրայական քարոզները, թարգմ. հայերենից և լեզվական բացատրություններ, Տյուբինգեն, 1980)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 303–304:

67. GERARD GARITTE, Scripta disiecta (1941–1977), t. I–II (Publications de l'Institut Orientaliste de Louvain, 21–22), Louvain, 1980, XXIX + 817 p. (ԺԵՐԱՐ ԳԱՐԻՏ. Սփռյալ երկեր (1941–1977), հ. I–II, Լուվեն, 1980, XXIX + 817 էջ)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 196–199:

68. CLAUDE E. COX. The Armenian Translation of Deuteronomy (University of Pennsylvania. Armenian Texts and Studies, 2), Scholars Press, Chico, California, 1981, XXIV + 415 p. (ԿԼՈԴ Ե. ԿՈՔՍ. Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանությունը (Պենսիլվանիայի համալսարան. Հայկական բնագրեր և ուսումնասիրություններ, 2), Չիկո, Կալիֆորնիա, 1981, XXIV + 415 էջ)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 199–202:

69. GABRIELE WINKLER. Das Armenische Initiationsrituale, Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10. Jahrhunderts (Orientalia Christiana Analecta, 217), Roma, 1982, 476 S. (ԳԱԲՐԻԵԼԵ ՎԻՆԿԼԵՐ. Մկրտության հայկական արարողությունը, III–X դարերի աղբյուրների քննությունը պատմական զարգացման և համեմատական ծիսագիտության տեսանկյունով, Հռոմ, 1982, 476 էջ)– ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 203–205:

70. Հայ միջնադարյան գրականության ժանրեր (Жанры армянской средневековой литературы). Երևան, 1984.– «Литературная Армения», 1985, № 8, с. 99–104

71. *HESYCHIUS DE JERUSALEM. Homnlies sur Job. Version armnienne. Edition, introduction et notes par Charles Renoux, traduction par Charles Mercier et Charles Renoux.* – In: F. Graffin, *Patrologia Orientalis*, t. 42, fasc. 1–2, № 190–191, Brepols, Turnhout/Belgique, 1983, 612 p. (ԻՍԻՔԻՈՍ ԵՐՈՒՍԱԴԵՄԱՅԻ. Մեկնություն Հոբի. հայերեն թարգմանություն). – ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-քանասիրական հանդես», 1987, -4, էջ 210–214:

72. *CHARLES RENOUX. La ChaSne armnienne sur les EpStres Catholiques. I. La ChaSne sur l'EpStre de Jacques.* – In: F. Graffin, *Patrologia Orientalis*, t. 43, fasc. 1, № 193, Brepols, Turnhout/Belgique, 1985, 160 p. (ՇԱՌԼ ՌԸՆՈՒ. Կաթողիկյա թղթերի մեկնության հայերեն քաղվածուն). – ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-քանասիրական հանդես», 1987, -4, էջ 214–217:

73. *CLAUDE E. COX, Hexaplaric Materials Preserved in the Armenian Version.* – *Society of Biblical Literature. Septuagint and Cognate Studies Series*, 21. – *Scholars Press, Atlanta, Georgia*, 1986, XV + 236 p. (ԿԼՈՂ Ե. ԿՈՔՍ. Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ պահպանված Վեցիջյան նյութերը). – ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-քանասիրական հանդես», 1987, № 4, էջ 217–220:

74. *E. H. Мещерская. Легенда об Авгаре – раннесирийский литературный памятник (Исторические корни в эволюции апокрифической легенды).* М., 1984, 250 с. – «Палестинский сборник», вып. 29 (92). Л., 1987, с. 179–182.

ԽՄԲԱԳՐԱԾ ԳՐՔԵՐ

75. Ներսես Շնորհալի. Հոդվածների ժողովածու, Երևան, 1977:

76. Բ. Ս. Տեր-Դավթյան. XI–XV դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980:

77. Բարսեղ Կեսարացի. Յաղագս Վեցալրեայ Արարչութեան, աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Երևան, 1984:

78. Գիրք Օննդոց. քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985:

79. Փ. Փ. Անթապյան. Վարդան Արևելյի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987:

80. Փ. Փ. Անթապյան. Վարդան Արևելյի. կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Երևան, 1989:

81. Լևոն Խաչիկյան. Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, 1992:

82. Երեմիայի մարգարեությունը, թարգմանություն գրաբարից Պողոս Խաչատրեանի, «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների. արևելահայերեն նոր թարգմանություն», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 1154–1257:

ԱՆՏԻՊՆԵՐ

(Ամբողջական կամ կիսավարտ մենագրություններ, հոդվածներ, զեկուցումներ, որոնք մեքենագիր և ձեռագիր վիճակում պահպանվում են ՀՀ Առաջին նախագահի արխիվում)

83. Հայ-ասորական գրական կապերը IV–V դարերում. Ասորական գրականության դերը հայ հին մատենագրության ձևավորման մեջ. դոկտորական թեզ, 467 էջ:

84. Ասորաբան հայերեն. Ասորերենի ազդեցությունը դասական հայերենի վրա. մենագրություն, 300 էջ:

85. Հայ-ասորական մատենագիտություն, 200 էջ:

86. Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հնագույն հայերեն թարգմանությունը:

87. Անդրեաս Բյուզանդացու ինքնության և նրա «Կանոն երկերիւրեակի» աշխատության հայերեն թարգմանության հանգամանքների շուրջ:

88. Իզնատիոս Անտիոքացու «Թղթերի» հայերեն թարգմանության նախօրինակի հարցի շուրջ:

89. Ասորերենից հայերենի թարգմանված հունական պարականոն գրքերը:

90. Ենթադրաբար ասորերենից հայերենի թարգմանված երկու հունական գրական հուշարձանների մասին. ա. Նիկիայի տիեզերաժողովի մասնակիցների ցանկը, բ. Հովհան Ոսկեբերանի «Յովհաննու աւետարանի մեկնութիւնը»:

91. Ափրահատ Ասորու (Զգաւն Պարսիկ) ճառախոսական ժողովածուի հայերեն թարգմանության լեզվական և բնագրագիտական բնութագիրը:

92. Զենոբ Ամդեցու ճառերի հայերեն թարգմանությունը:

93. Եփրեմ Ասորու երկերի հայերեն թարգմանությունները. բնագրագիտական և մատենագիտական տեսություն:

94. Եփրեմ Ասորու «Հաւատոյ գրքի» հայերեն թարգմանությունը. առաջաբան և բնագիր. հեղինակակցությամբ Ֆրանսիացի հայագետ Բեռնար Ուտիեի:

95. Եփրեմ Ասորու «Եզեկիելի մեկնության» հայերեն թարգմանությունը. առաջաբան և բնագիր:

96. Ասորական պարականոն գրքերի դասական հայերեն թարգմանությունները:

97. Սելևկյան թվականության գործածությունը հայ մատենագրության մեջ:

98. Հայ-ասորական հարաբերությունների գնահատականը միջնադարում:

99. Աբրահամ Կիդունացու ասորական վարքի հայերեն թարգմանությունը. առաջաբան և քննական բնագիր:

100. Ճոխաթի (Գավիկաթի) ասորական վանքի դերը Կիլիկիո Հայոց թագավորության և Հակոբիկյան եկեղեցու հարաբերություններում:

101. Ապառնիի կազմության մի բաղադրյալ եղանակ ասորերենից կատարված հայերեն թարգմանություններում:

102. Հայ թարգմանական գրականության գիտական և փիլիսոփայական հուշարձանների ուսումնասիրությունը խորհրդային տարիներին (զեկուցում):

103. «Հայ եկեղեցական մատենագրություն» առարկայի դասավանդման մեթոդաբանության շուրջ:

104. Հայաստանը և Ասորիքը III–XIV դարերում:

105. Проявления «тенденциозности» в армянских переводах V века (доклад).

106. *Характерные черты начального периода армяно-сирийских литературных отношений (доклад).*

107. *О значении древнеармянских переводов сочинений Ефрема Сирина (доклад).*

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(Բազմալեզու մամուլում սփռված հազարավոր հրապարակումներից
ցանկում ընդգրկված են միայն ժողովածուներով և առանձին
գրքույկներով ներկայացված նյութերը)

108. *Հնտրական ծրագիր, Երևան, 1996, 16 էջ:*

109. *Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն.– «Պահպանողական Շեմ մատենաշար – 4», Երևան, 2001, 36 էջ:*

110. *Ապագան բախում է դուռը.– «Պահպանողական Շեմ մատենաշար – 10», Երևան, 2002, 40 էջ:*

111. *Հնտրանի. Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ. 1983–1998 թթ. (Selected speeches, articles, interviews), Երևան, 2006, 728 էջ:*

112. *Ավագակապետության անատոմիան և մեխանիկան, «Արմատ» կենտրոն, Երևան, 2007, 42 էջ:*

113. *Анатомия «Бандократии». Ереван, 2007, 28 с.*

114. *The anatomy of «Bandocracy». Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown, Yerevan, 2007, 26 p.*

115. *Բարեկամական զրույց, Երևան, 2007, 32 էջ:*

116. *Дружеская беседа. Ереван, 2007, 25 с.*

117. *A friendly Talk. Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown, Yerevan, 2007, 23 p.*

118. *Պատմություն, գաղափարախոսություն, ի պարանություն, Երևան, 2007, 42 էջ:*

119. *История, идеология, типология. Ереван, 2007, 32 с.*

120. *History, Ideology, Typology. Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown. Yerevan, 2007, 30 p.*

121. *Նախընտրական ծրագիր կամ հանդարտ խոհեր, Երևան, 2008, 32 էջ:*

122. *Предвыборная программа или неспешные раздумья. Ереван, 2008, 32 с.*

123. *Ելույթ Համաժողովրդական շարժման կոնգրեսում, Երևան, 2008, 34 էջ:*

124. *Վերադարձ. Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ. 2007–2009 թթ. (Speeches, interviews, press conferences), Երևան, 2009, 380 էջ:*

125. *Հայ-թուրքական հարաբերություններ (Armenian-Turkish Relations), Երևան, 2009, 96 էջ:*

126. *Հայոց ցեղասպանությունը. հայացք պետականության դիտակետից, Երևան, 2015 (տպագրության ընթացքի մեջ է):*

127. *Մաքառում. Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ. 2009–2015 թթ. (Speeches, articles, interviews), Երևան, 2015 (տպագրության ընթացքի մեջ է):*